


EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

# Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու

թիվ 150

ՄԱՐՏ 2012



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾ 5

#### Հոդված 5 § 1 Ազատազրկում

Ոստիկանների կողմից խաղաղ ցուցարարներին զսպում մոտ յոթ ժամ՝ խախտում չկա  
*Austin and Others/et autres – United Kingdom/Royaume-Uni [GC] - 39692/09, 40713/09  
and/et 41008/09* -----2

### ՀՈԴՎԱԾ 6

#### Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

##### Ընդունելիություն

##### Կողմերի մրցակցություն

Աշխատողի՝ մասնագիտական բնույթի հիվանդության բժշկական փաստաթյուրի չտրամադրումն գործառություն՝ անընդունելի

*Eternit – France (dec./déc.) - 20041/10* -----5

#### Դատարանի մատչելիության

##### իրավունք

Գերմանական դատարանների առջև քաղաքացիական հայց ներկայացրած արտասահմանյան ընկերությանը իրավաբանական օգնության տրամադրման մերժումը՝ խախտում  
*Granos Organicos Nacionales S.A. – Germany/Allemagne - 19508/07* -----7

#### Հոդված 6 § 1 (քրեական)

##### Դատարանի մատչելիության իրավունք

Ավտոճանապարհին երթևեկության կանոնների խախտման տուգանքի վճարումից հետո  
բողոքարկման անհնարինություն՝ խախտում

*Célice – France - 14166/09 Jossealme – France - 39243/10* -----9

### ՀՈԴՎԱԾ 6 § 2


#### Ընդունելիություն

Լիցենզիայի մերժումը՝ ելնելով այն պատճառաբանությունից, որ այն կարող է օգտագործվել քրեական հանցագործություն կատարելու նպատակով՝ 6-րդ հոդվածը կիրառելի չէ  
*Bingöl – Netherlands/Pays-Bas - 18450/07* -----11

#### Անմեղության կանխավարկած

Մինչ վարչական մարմնի կողմից որոշում կայացնելը՝ հետաքննության հաշվետվության իրապարակումը մամուլում՝ անընդունելի  
*Société Bouygues Telecom – France (dec./déc.) - 2324/08* -----12

### ՀՈԴՎԱԾ 8



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

## Անձնական կյանքը հարգելու իրավունք

Հրապարակումներ, որոնք ենթադրաբար վիրավորել են ցիզաններին՝ խախտում չկա  
*Aksu – Turkey/Turquie [GC] - 4149/04 and et 41029/04*

13

## Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Երեխայի տեղավորումը անարգալից անցյալից ապագա որդեգրող ծնողի մոտ՝ խախտում  
չկա

*Y.C. – United Kingdom/Royaume-Uni - 4547/10* -----16

## ՀՈԴՎԱԾ 13

### Իրավական պաշտպանության արդյունավետ միջոց

Կամավոր հոգեբուժական խնամքի ներքո գտնվող դիմումատուի որդու ինքնասպանության հետ  
կապված վնասերի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայություն՝  
խախտում

*Reynolds – United Kingdom/Royaume-Uni - 2694/08* -----18

## ՀՈԴՎԱԾ 14

### Խորականություն (Հոդված 5 § 1)

Փակ ուղղիչ հիմնարկում ազատազրկումը կրելու ժամանակ դիմումատուի օտարերկրյա քաղաքացի  
լինելու պատճառով ողջալական թերապիայի կամ հանգստի պայմանների մերժում՝ խախտում

*Rangelov – Germany/Allemagne - 5123/07* -----19

### Խորականություն (Հոդված 8)

Երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի իրավունքի վերաբերյալ իգական և արական  
գինվորական անձնակազմի միջև տարբերություն՝ խախտում

*Konstantin Markin – Russia/Russie [GC] - 30078/06* -----20

Երեխայի որդեգրուման մերժումը մի կնոջ, ով երեխայի բիոլոգիական մոր հետ ապրում է որպես  
հոմոսեքսուալ զոյգ՝ խախտում չկա

*Gas and Dubois v. France - 25951/07* -----24

### Խորականություն (10-րդ հոդված)

Ընտրություններ՝ քրեական դատավարությանը մասնակցելուն իրավասու լրագրողներին ցուցակագրելով՝  
անընդունելի

*Axel Springer AG v. Germany (dec.) - 44585/10* -----25

## ՀՈԴՎԱԾ 34

### Հայց ներկայացնելու իրավունքի իրականացման խոչընդոտում


Ժամանակավոր միջոցառումներ չիրականացնելու վերաբերյալ Դատարանի կողմից նշում  
խոշտանգման իրական վտանգի մասով՝ խախտում

*Mannai v. Italy - 9961/10* -----28

## ՀՈԴՎԱԾ 35

### Հոդված 35 § 3 (b)

### Ոչ էական թերացումներ



COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Բրեական վարույթի գործով ազատազրկման պատժաչափի նվազեցում՝ անընդունելի	29
<i>Gagliano Giorgi v. Italy - 23563/07</i>	
Դիմումատուի կողմից ցածրարժեք պահանջի կապակցությամբ երկարատև անզործություն՝ անընդունելի	
<i>Shefer v. Russia (dec.) - 45175/04</i>	30
<b>ՀՈԴՎԱԾ 37</b>	
<b>Հոդված 37 § 1</b>	
<b>Գանգատների ցուցակից հանումը</b>	
Բարեկամական կարգավիրում կազմելու վերաբերյալ Կառավարության միակողմանի հայտարարության պայմանների հետ դիմումատուի համաձայնությունը՝ մասնակի ցուցակից հանված	
<i>Cēsnieks v. Latvia (dec.) - 9278/06</i>	31

## **ՀՈԴՎԱԾ 37 § 1 (գ)**

### **Չարդարացված շարունակվող քննություն**

Իրական և անխուսափելի հանձնման վտանգի բացակայություն՝ ցուցակից հանվել է	
<i>Atmaca v. Germany (dec.) - 45293/06</i>	32

## **ՀՈԴՎԱԾ 46**

### **Պիլոտային վճիռներ Ընդհանուր միջոցներ**

Պատասխանող Պետությունը պահանջում էր ներկայացնել չափազանց երկարատև դատավարության համար համարժեք փոխհատուցման արդյունավետ միջոց	
<i>Ümmüihan Kaplan v. Turkey - 24240/07</i>	33

### **Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդված Ընտրելու իրավունք**

#### **Անձանց կողմից կարծիք հայտնելու ազատություն**

Հունաստանի քաղաքացի օտար երկրում բնակվող անձանց խորհրդարանական ընտրություններին մասնակցելու գործընթացը կարգավիրող օրենսդրության բացակայություն՝ խախտում չկա	
<i>Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece [GC] - 42202/07</i>	34

### **Դատարանի նորություններ**

Դատարանի ապագայի վերաբերյալ Բրայթոնի համաժողով	36
Դատարանի վերջին իրատարակություններ	36

1. Ոչ պաշտոնական լեզուներով թարգմանություններ
  - Խպրականության արգելման վերաբերյալ ծեռնարկ
  - Գործնական ուղեցուց վարույց ընդունելու չափանիշների մասին
2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2011թ. դարեկան գեկույցը

## ՀՈԴՎԱԾ 5 Հոդված 5 § 1

### Ընդունելիություն Ազատազրկում

**Ոստիկանների կողմից խաղաղ ցուցարարներին զապում մոտ յոթ ժամ՝ 5-րդ հոդվածը կիրառելի չէ. խախորում չկա**

**Austin and Otherslet autres v. United Kingdom/Royaume-Uni  
Առևտինն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության,  
թիվ 39692/09, 40713/09 և 41008/09,  
Վճիռ 15.3.2012 [ՄՊ]**

### Փաստեր

2001թ. մայիսի 1-ին Լոնդոնում տեղի ունեցավ կապիտալիզմի և գլոբալիզմի դեմ ուղղված մեծ ցույց: Կազմակերպիչները տեղյակ չէին պահել ոստիկանության իրենց մտադրությունների մասին և նախապես իրականացված իրապարակայնության գաղափարը ներառում էր կողոպուտի, բռնության և Լոնդոնի ամբողջ տարածքում բռնըների հրարրում: Ոստիկանության ընդունակությունը ցույց տվեց, որ խաղաղ ցույցի հետ մեկտեղ, դրան հավանաբար կմասնակցեին 500-ից 1000 բռնի և հակամարտ անձինք: Վաղ առավոտյան մի մեծ ամբոխ շարժվեց դեպի Օքսվորդ Սթրու, այնպես որ քննվող իրադրության ժամանակ մոտ 3000 մարդ գտնվում էր Սթրու-ի մեջ և

ավելի քան հազարավոր մարդիկ հավաքվել էին դրսի փողոցներում: Մարդկանց վնասվածքների և գույքի վնասների կանխման նպատակով ոստիկանությունը որոշեց, որ անհրաժեշտ էր զապել ամբոխը՝ շրջափակելով տարածքից դուրս բերող բոլոր ճանապարհները: Շրջափակման մեջ և դրա դրսում գտնվող մարդկանց կողմից բռնության և հնարավոր բռնության պատճառով, ինչպես նաև այն պատճառով, որ ոստիկանությունը փնտրում և հաստատում էր շրջափակման մեջ գտնվող անձանց ինքությունը, որոնք կասկածվում էին մի շարք խաղաղ ցուցարարներին և անցորդներին անհանգստության պատճառման մեջ՝ ներառյալ դիմումատունները մի քանի ժամ ազատ չէին արձակել:

Այս իրադարձություններից հետո, առաջին դիմումատուն փորձնական դատական գործ բերեց Բարձրագույն Դատարան՝ սխալ ձերբակալմամբ և Կոնվենցիալով նախատեսված իր իրավունքների խախտմամբ կրած վնասների հատուցման համար: Իր հայցը մերժվեց և այդ որոշումը հաստատվեց բողոքարկման ժամանակ: Լորդերի պալատը միաձայն գտավ<sup>1</sup>, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով չկար ազատությունից որևէ զրկում, քանի որ ոստիկանության մտադրությունն էր պաշտպանել և՛ ցուցարարներին, և՛ գույքը բռնությունից, իսկ զապումը տևել էր այնքան, որքան անհրաժեշտ էր այդ նպատակին հասնելու համար: Ըստ նրա, զապման նպատակն ու տեղաշարժման սահմանափակումը դրանք պարտադրողների մտադրությունների հետ միասին առնչվում էին այն հարցին, թե արդյոք տեղի էր ունեցել ազատության

<sup>1</sup> Austin (FC) & another v. Commissioner of Police of the Metropolis [2009] UKHL 5.

զրկում, և ամբոխի կառավարման միջոցները համաշափ էին և կիրառվել էին բարեխիղճ՝ հանրության շահերից ելնելով և չեն խախտում 5-րդ հոդվածով նախատեսված ամբոխի յուրաքանչյուր անդամի իրավունքները, ում տեղաշարժման ազատությունը սահմանափակվել էր:

## ԻՐԱՎՈՒՆՔ

### Հոդված 5 § 1

Սա առաջին գործն էր, որտեղ Դատարանը քննում էր 5-րդ հոդվածի § 1-ի կիրառումը «քերջինգ»-ի կամ ոստիկանության կողմից հասարակական կարգի պահպանման հիմքերով մարդկանց խմբի զսպման առնչությամբ: Այս կոնտեքստում այս համընդիանուր սկզբունքները ունեն առանձնակի կարևորություն.

(ա) Օպերատիվ որոշումների ընդունման ընթացքում ոստիկանությանը պետք է տրված լինի գործողությունների ազատության որոշ աստիճան: 5-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այն կերպ, որը իրենց համար անգործելի կողածնի իրականացնել իրենց պարտականությունները հասարակական կարգը պահպանելուն և հանրությանը պաշտպանելուն ուղղված, որոնք ապահովեցին 5-րդ հոդվածի հիմքում ընկած սկզբունքը, այն է պաշտպանել անձին կամայականությունից:

(բ) 5-րդ հոդվածի § 1-ը ուղղված չէ զուտ տեղաշրժման ազատության սահմանափակմանը, որոնք կարգավորվում են 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածով (այն արձանագրությունը, որը Միացյալ Թագավորությունը չի վավերացրել): Որոշելու համար, թե արդյոք որևէ մեկը «զրկվել է իր ազատությունից» 5-րդ հոդվածի § 1-ի իմաստով, սկզբնակետը

պետք է լինի նրա կոնկրետ դրությունը, ինչպես նաև պետք է հաշվի առնել չափանիշների մի ամբողջ շարք, ինչպիսիք են տեսակը, տևողությունը, ազդեցությունները և քննվող միջոցի կիրառման ձևը: Ազատությունից զրկելու և ազատության սահմանափակման միջև տարբերությունը ինտենսիվության մեջ է, այլ ոչ թե բնույթի կամ էության:

(գ) Քննվող միջոցի հետապնդող նպատակը չպետք է հաշվի առնվի որոշելիս թե արդյոք տեղի է ունեցել ազատության սահմանափակում (չնայած այն կարող է էական լինել հաջորդող հարցման համար թե արդյոք ազատության սահմանափակումը արդարացված էր 5-րդ հոդվածի § 1-ի ենթակետերից մեկի ներքո):

(դ) Ի հակադրումն, իրադրությունը, որի ժամանակ քննվող միջոցը կիրառվել էր, կարևոր ցուցանիշ է: Հանրության անդամները կոնկրետ իրադրություններում հաճախակի ստիպված էին լինում դիմանալու տեղաշրժման ազատության ժամանակավոր սահմանափակումների, ինչպիսիք են հասարակական տրանսպորտով կամ երթուղղով ճանապարհորդելը, կամ ֆուտբոլային խախին հաճախելը: Այսպիսի հաճախակի տեղի ունեցող սահմանափակումները չեն կարող պատշաճ կերպ բնութագրվել որպես «ազատության սահմանափակում» 5-րդ հոդվածի § 1-ի իմաստի ներքո քանի դեռ դրանք ներկայացվում էին որպես անբաժանելի իրադրության արդյունք՝ անկախ իշխանությունների կառավարումից, անհրաժեշտ էին լուրջ վնասի իրական ռիսկը կանխելու համար, և այդ իսկ նպատակներով պահպան էին ամենացածր մակարդակի վրա:

Վերադառնալով դիմումատունների գործի փաստական հանգամանքներին,

Դատարանը նշեց, որ երեքարբարյա դատաքննության և բավականին լուրջ ապացուցների դիտարկման հետևանքով, դատավորը գտավ, որ ոստիկանությունը ակնկալում էր «իիմնական օղակ» հանդիսացող 500-ից 1000 բռնի ցուցարարների հավաք Օքսվորդ Սըրքսի մոտ ցերեկը ժամը 4-ին և որ կար լուրջ վնասվածքների, նույնիսկ մահվան, կամ գույքի վնասների իրական վտանգ, եթե ամբոխը արդյունավետ չվերահսկվեր: Նրանք անակնկալի բերվեցին, երբ 1500 մարդ հավաքվեց այնտեղ երկու ժամ առաջ և որոշեցին, որ բռնության և վնասվածքների ու վնասների ռիսկի կանխարգելման համար պետք է կիրառել բացարձակ շրջափակում: Ցերեկը ժամը 2:20-ին ամբողջ շրջափակումը տեղում էր և ամբոխից ոչ ոք թույլատրված չէր լրել տարածքը առանց թույլտվության: Շրջափակման մեջ կար մարդկանց զբոսնելու և չսղմվելու համար տարածք, սակայն պայմանները անհարմարավետ էին, առանց կացարանի, սննդի, ջրի կամ գուգարանային հնարավորություններով: Չնայած ոստիկանությունը փորձում էր ցերեկը և երեկոյան սկսել ազատ արձակել մարդկանց, իրենց փորձերը շարունակ կասեցվում էին ինչպես շրջափակման ներսում, այնպես էլ շրջափակումից դուրս գտնվող որոշ փոքրամասնության բռնի և անհամագործակից պահվածքի պատճառով, և ամբողջովին ցրումը չավարտվեց մինչև երեկոյան ժամը 9:30: Մոտավորապես 400 անձանց, որոնք հստակորեն բնորոշվեցին որպես ցույցին չմասնակցող կամ այդտեղ պահվելու հետևանքով լրջորեն վնասված, թույլատրվել էր նախապես լրել վայրը: Այս եզրակացությունների հիման վրա Դատարանը դիտարկեց, որ շրջափակման մեջ պահվելու հարկադիր բնույթը, դրա

տևողությունը և դրա ազդեցությունը դիմումատուների վրա, հիգենան անհանգստության և Օքսվորդ Սըրքսից հեռանալու անհնարինության պայմաններում, ուղղված էին ազատության սահմանափակմանը: Այնուամենայնիվ, Դատարանը նաև պետք է հաշվի առնի քննվող միջոցի «տեսակը» և «կիրառման ձևը» քանի որ իրադրությունը, որում կիրավել է միջոցը էական է: Շրջափակումը կիրառվել էր մեծ ամբոխը մեկուսացնելու և վտանգավոր ու անկայուն պայմաններում պահելու համար: Դա զսպման միջոց էր, որին գերակայություն էր տրվել ուրիշ խստիվ միջոցների շարքից, որոնք կարող էին վնասվածքների ավելի մեծ ռիսկ ունենախն: Դատարանը չունի որևէ պատճառ չհամաձայնվելու դատավորի եզրակացության հետ, որ այդ պայմաններում ամբողջովին շրջափակումն ամենաքիչ ինթրուզիվ և առավել արդյունավետ միջոցն էր կանխարգելելու լուրջ վնասվածքների կամ վնասների իրական ռիսկը: Այս հանգամանքներում, Դատարանը չի գտնում, որ շրջափակման իրագործումը հանգել է «ազատության գրկման»: Իսկապես, դիմումատուները չեն պնդում, որ առաջին անգամ այն կիրառելու ժամանակ շրջափակման մեջ գտնվողները անմիջապես զրկվեցին ազատությունից և Դատարանը չկարողացավ հաստատել այն պահը, որից հետո զայումը կարելի է դիտարկել փոփոխված նրանից, ինչ եղել է, առավելագույնը, տեղաշարժման պատության սահմանափակումից «ազատությունից գրկում»: Զարմանալի է, որ ամբողջովին շրջափակման կիրառումից ընդամենը հինգ րոպե անց ոստիկանությունը պլանավորում էր սկսել վերահսկող ազատ արձակում: Դրանից հետո նրանք ծեռնարկեցին որոշ փորձեր և

պահեցին իրադրությունը ամբողջ երկայնքով փակ վերահսկողության տակ: Համապատասխանաբար, այս գործի առանձնահատուկ և բացառիկ փաստական հանգամանքների համաձայն, 5-րդ հոդվածի § 1-ի իմաստով տեղի չի ունեցել ազատությունից գրկում: Վերջում, քանի որ 5-րդ հոդվածը կիրառելի չէ, այս գործում տեղի չի ունեցել այդ դրույթի որևէ խախտում:

Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ ամբոխը կառավարելուն ուղղված միջոցները չպետք է օգտագործվեն պետական իշխանությունների կողմից ուղղակիրեն կամ անուղղակիրեն բողոքը խափանելու կամ վիատեցնելու համար, տրված է էական նշանակություն արտահայտվելու և միավորվելու ազատությանը բոլոր դեմոկրատական հասարակություններում: Եթե անհրաժեշտ չի ունեցել ուստիկանության կողմից կիրառել և պահպանել շրջափակումը լուրջ վնասվածքների կամ վնասների կանխարգելման համար, միջոցի «տեսակը» կտարբերվեր, և իր հարկադիր և սահմանափակող բնույթը կարող էր բավարար լինել այն 5-րդ հոդվածի ներքո բերելու համար:

### **Եզրակացություն՝ խախտում չկա (տասնչորս ձայնն ընդդեմ երեքի)**

#### **ՀՈԴՎԱԾ 6 Հոդված 6Տ 1 (քաղաքացիական)**

**Ընդունելիություն  
Կողմերի մրցակցություն \_\_\_\_\_**

**Աշխատողի՝ մասնագիտական բնույթի  
հիվանդության բժշկական**

### **Փաստաթղթերի չտրամադրումն գործատուին՝ անընդունելի**

*Eternit v. France*  
Էթերնիթը ընդդեմ Ֆրանսիայի  
թիվ 20041/10, Որոշում 27.3.2012  
(5-րդ բաժանմունք)

### **Փաստեր**

2005թ. դեկտեմբերին Առողջության ապահովագրության գրասենյակը դիմումատու կազմակերպությանը իր նախկին աշխատողի կողմից ուղարկված մյուս փաստաթղթերի հետ մեկտեղ ուղարկել է նաև մասնագիտական բնույթի հիվանդության հայտարարագիր: Առողջության ապահովագրության գրասենյակը հետագայում տեղյակ է պահել դիմումատու կազմակերպությանը, որ նախկին աշխատողի գործը քննվել է և կազմակերպությունն ունի քանոնեկ օր դա քննարկելու համար: Գրասենյակը ուղարկել է կազմակերպությանը տարատեսակ փաստաթղթեր, ներառյալ՝ խորհրդատվություն տվող բժշկի եզրակացությունը այն մասին, որ հիվանդությունը կապված էր աշխատանքի հետ: 2006թ. փետրվարին Առողջության ապահովագրության գրասենյակը տեղեկացրել է դիմումատու կազմակերպությանը նախկին աշխատողի առողջական վիճակի մասնագիտական ծագումը ճանաչելու իր որոշման մասին: Դիմումատու կազմակերպությունը բողոք է բերել սոցիալական ապահովության գործերով դատարան՝ պնդելով, որ մրցակցության սկզբունքը չի պահպանվել, քանի որ Առողջության ապահովագրության գրասենյակը չի ներկայացրել այն բժշկական տվյալները, որոնց հիման վրա խորհրդատվություն տվող բժշկը տվել է իր եղրակացությունը: 2008թ. վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի վճիռը հօգուտ դիմումատու

կազմակերպությանը և հաստատել է Առողջության ապահովագրության գրասենյակի որոշումը՝ նախկին աշխատողի հիվանդության ծախսերը ծածկելու մասին։ Դիմումատու կազմակերպությունը նյութական իրավունքի հիմքով բողոք է բերել դրա դեմ, սակայն բողոքը մերժվել է։

## ԻՐԱՎՈՒՆՔ

### Հոդված 6 § 1

(ա) **Ընդունելիություն** - Կոնվենցիայի 6-րդ հոդվածի § 1-ը քաղաքացիական մասով կիրառելի է, երբ գործատուն վիճարկում է, որ այդ հիվանդությունը ձեռք է բերվել աշխատանքային գործունեության ժամանակ՝ արտադրությունում դժբախտ պատահարների և հիվանդությունների մասնավոր իրավունքի սոցիալական ապահովության համակարգի հայեցակետերի պատճառով։ Գործատուի և Առողջության ապահովագրության գրասենյակի միջև հարաբերությունները տարբեր կողմերից համեմատելի են ապահովագրված անձի և ապահովագրողի միջև եղած հարաբերությունների հետ։ Գործատուն վճարումներ էր կատարում Առողջության ապահովագրության գրասենյակին, ինչը ծածկում էր արտադրությունում դժբախտ պատահարների և հիվանդությունների ծախսերը և շահագրգիռ կազմակերպության գեկուցի հիման վրա գործատուից բռնագանձում էր ապահովագիր, որը ազդեցություն կունենար արտադրությունում մի շարք դժբախտ պատահարների և հիվանդությունների առնչությամբ։

(բ) **Արդարացիությունը** - Մասնագիտական բժշկական եզրակացությունը այնքանով, որքանով այն պատկանում է տեխնիկական բնագավառին, այսինքն դատավորների գիտելիքների սահմաններից դուրս էր, հավանաբար ազդել է նրանց կողմից

փաստերի գնահատման վրա և հավաստիացրել է նրանց հիվանդության աշխատանքային ծագման մեջ։ Այնուամենայնիվ, գործատուի համար աշխատողի հիվանդության պատմությունը և բուժող բժշկի եզրակացությունների հասանելի չկայուն բացատրվում էր բժշկից պահանջվող բժշկական գաղտնիությամբ։ Ճիշտ է, որ բժշկական գաղտնիության իրավունքը բացարձակ չէ, սակայն, ինչպես դա արվել է դիմումատու կազմեկերպության մրցակցային վարույթի առնչությամբ, այն պետք է հաշվի առնվի և պետք է արվի այնպես, որ որևէ իրավութիւնը էլույթունը չսահմանափակվի։ Այս հավասարակշռությունը պահպանվել էր, երբ հիվանդության աշխատանքային ծագումը վիճարկող բժիշկը կարող էր խնդրել դատարանին նշանակել անկողմնակալ բժիշկ, որը կարող էր ուսումնասիրել աշխատողի հիվանդության պատմությունը և, հարգելով հիվանդությունների պատմությունների գաղտնիությունը, եզրակացություն կատարել դատարանին և կողմերին ուղղորդելու համար։ Ընթացակարգը, համաձայն որի Առողջության ապահովագրության գրասենյակը որոշում էր կայացրել աշխատողի հիվանդության կամ պատահարի արտադրական բնույթի վերաբերյալ, սովորաբար ենթարկվում էր մրցակցության սկզբունքին և գործատուին տեղեկացնելու մասին պարտավորությանը, ինչպես պահանջվում է ֆրանսիական օրենքով և երաշխավորված է սոցիալական ապահովության գործերով դատարանների կողմից։ Բժիշկի միջոցով գործատուի համար աշխատողի հիվանդությունների պատմությանը հասանելիության հնարավորություն ունենալն երաշխավորում է մրցակցային դատավարությունը՝ առանց սահմանափակելու բժշկական գաղտնիքի դիմումատուի իրավունքը։ Այն փաստը, որ մասնագիտական եզրակացությունը չէր նշանակվում ամեն անգամ, երբ գործատուն այն պահանջում էր, այլ միայն երբ դատարանը

գտնում էր, որ իր մոտ ունեցած տեղեկատվությունը բավարար չէ, համապատասխանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի § 1-ով նախատեսված արդարացի դատարնության պահանջներին: Դատարանը չպետք է հաստատեր, թե արդյոք պետք է լիներ մասնագետի եզրակացությունը այս գործով, այլ պետք է սահմաներ թե արդյոք վարույթն ամբողջությամբ, ներառյալ՝ ապացույցների ներկայացումը, արդարացի էր: Առողջության ապահովագրության գրասենյակը որոշում է կայացրել բացառապես իր բժիշկի եզրակացության վրա հիմնվելով: Այդ բժիշկը, այնուամենայնիվ, Առողջության ապահովագրության գրասենյակի ուղղակի իրավասության ներքո չէր, այլ գտնվում էր Վարձու աշխատողների առողջության ազգային ապահովագրության հիմնադրամի իրավասության տակ: Դա անդրադառնում էր ոչ միայն բժիշկի անկողմնակալ կարգավիճակի վրա Առողջության ապահովագրության գրասենյակը սպասարկող վարչական անձնակազմի հետ հարաբերություններում, այլ նաև՝ իրեն սահմանափակող գաղտնիության պահպանման պարտավորության վրա: Այդ դեպքում, Առողջության ապահովագրության գրասենյակը սպասարկող վարչական անձնակազմին նույնպես հասանելի չեն եղել դիմումատու կազմակերպության կողմից պահանջվող հիվանդությունների պատմությունը, և, այդպիսով, Առողջության ապահովագրության գրասենյակին չէր տրվել պարզ առավելություն վարույթում դիմումատու կազմակերպության առջև:

**Եզրակացություն.** անընդունելի (ակնհայտորեն անհիմն)

## **Դատարանի մատչելիության իրավունք**

**Գերմանական դատարանների առջև քաղաքացիական հայց ներկայացրած արտասահմանյան ընկերությանը իրավաբանական օգնության տրամադրման մերժումը՝ խախտում**

**Granos Organicos Nacionales S.A. v.  
Germany  
Գրանոս Օրգանիկոս Նացիոնալ Ս.Ա.  
ընդդեմ Գերմանիայի  
թիվ 19508/07, Վճիռ 22.3.2012  
(5-րդ բաժանմունք)**

## **Փաստեր**

Դիմումատու կազմակերպությունը գրանցված է ներպետական օրենքի հիման վրա և հիմնադրված է Լիմայում: 2005 թվականին այն իրավական օգնություն խնդրեց՝ Գերմանիայում երկու գերմանական կազմակերպությունների դեմ քաղաքացիական հայց բերելու համար: Գերմանական դատարանները մերժեցին խնդրանքը այն հիմքով, որ գերմանական օրենքի հիման վրա իրավական օգնության տրամադրման ենթակա են միայն Եվրոպիությունում կամ Եվրոպական Տնտեսական Գոտում հիմնադրված իրավաբանական անձինք: Եվրոդատարանին իր դիմումի մեջ դիմումատուն բողոքարկեց իր՝ դատարանի մատչելիության իրավունքը (Կոնվենցիայի հոդված 6 § 1) և խտրականությունը (հոդված 6 § 1-ը 14-րդ հոդվածի հետ համակցությամբ):

## **ԻՐԱՎՈՒՆՔ**

### **Հոդված 6 § 1**

Զկա որևէ համաձայնություն կամ նույնիսկ համաձայնեցման միտում կոնվենցիայի

մասնակից պետությունների միջև իրավաբանական անձանց իրավական օգնության ցուցաբերման առնչությամբ: Իսկապես, որոշ պետությունների իրավունքը չի սահմանում իրավաբանական անձանց համար որևէ իրավական օգնության ծև: Գերմանական օրենքի համաձայն իրավական օգնությունը հասանելի էր միայն այն արտասահմանյան իրավաբանական անձանց, որոնք գրանցված կամ տեղակայված են Եվրոպիությունում կամ Եվրոպական Տնտեսական Գոտում: Համաձայն գերմանական դատարանների, մոտեցման այս տարբերությունը պայմանավորված է փոխադարձության սկզբունքով: Դատարանը նշեց, որ պերուական օրենքը հստակորեն ապահովում էր իրավական օգնություն միայն ֆիզիկական անձանց համար և որ դիմումատու կազմակերպությունը չկարողացավ ներկայացնել որևէ դատական նախադեպ արտասահմանյան իրավաբանական անձանց իրավական օգնության տրամադրմամբ: Այն հետագայում դիտարկեց, որ ներպետական դատարանները դիմումատու կազմերապությանը իրավական օգնության տրամադրման մերժող որոշման հիմքում դրել էին համապատասխան հիմնավորումները: Ինչ վերաբերվում է այն հարցին, թե արդյոք դիմումատու կազմակերպության դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները կարող են համարվել հետապնդվող նպատակներին համաշափ, հատուկ կշիռ պետք է հատկացվի գերմանական օրենքով սահմանված ընուացակարգային երաշխիքների, մասնավորապես, եթե դատական ծախսերի անմիջական վճարումն բարդություններ է առաջացնում, դատական ծախսերի նախնական վճարման պարտականության

բացառման միջնորդություն ներկայացնելու հնարավորություն: Այդ հնարավորությունը միանման առկա է և՝ ֆիզիկակական անձանց, և՝ իրավաբանական անձանց մոտ և չի տարբերվում ներպետական և արտասահմանյան իրավաբանական անձանց միջև: Դիմումատու կամզակերպությունը կարող էր այդպիսի պահանջ ներկայացնել, բայց չարեց դա: Մինչդեռ ճիշտ է, որ նոյնիսկ եթե այն ծեռք բերեր այդպիսի բացառություն, դիմումատու կազմակերպությունը միևնույն է կարող էր պատասխանատու մնալ իր սեփական հյուպատոսարանի ծախսերի նախնական վճարման համար կամ իր հակառակորդի դատական ծախսերի վճարման երաշխիքի ապահովության համար, Դատարանը նշեց, որ հյուպատոսական ծախսերի նախնական վճարումը գերմանական օրենքի համաձայն պարտադիր չէ և հաստատված չէ, որ երաշխիքի ապահովմամ հարց է բարձացվել դատաքննության ընթացքում: Այս պայմաններում, դիմումատու կազմակերպության հանդեպ կիրառված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները համաշափ էին հետապնդվող նպատակներին:

### **Եզրակացություն՝ խախտում չկա(միաձայն):**

Հոդված 6 § 1-ը հոդված 14-ի հետ համակցությամբ Դատարանը 6-րդ հոդվածի § 1-ի իր եզրակացությունների լուսի ներքո գտնում է, որ կառավարությունը ներկայացրել է հիմնավոր պատճառներ ֆիզիկական և իրավաբանական անձանց (մանավոր կազմակերպությունների կողմից դատավարության ֆինանսավորման համար հանրային միջոցների օգտագործումը կառավարելու անհրաժեշտություն), ինչպես

նաև ներպետական և արտասահմանյան իրավաբանական անձանց հանդեպ տարբերվող մոտեցման համար (փոխադարձության սկզբունք):

գործի վերանայման հայցով: Նրանց դիմումները չեն ընդունվում:

## ԻՐԱՎՈՒՆՔ

Եզրակացություն՝ խախտում չկա(միաձայն):

### Հոդված 651 (քրեական)

Դատարանի մատչելիության  
իրավունք

Ավտոճանապարհային երթևեկության  
կանոնների խախտման տուգանքի  
վճարումից հետո բողոքարկման  
անհնարինություն՝ խախտում

*Celice v. France*

Սելիսն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 14166/09

*Josseautie v. France*

Ժոզեմն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ

39243/10

Վճիռ 8.3.2012

(5-րդ բաժանմունք)

ա) Ընդունելիություն (ներպետական դատական պաշտպանության միջոցների սպառում) – Սելիսի գործում, հայցը, որը համարվել էր անընդունելի, դիմումատուի կողմից վճարումը կատարվել էր որպես ոչ աճող տուգանք, որը ենթակա էր մեկանգամյա վճարման և կարող էր հանգեցնել դատարան դիմելու հնարավորության:

Ժոզեմնի գործում, դատախազության աշխատակիցը հարկ չի համարել պատասխան տալ դիմումատուների տուգանքը չվճարելու պահանջի առնչությամբ, ներառյալ՝ հավելավճարը՝ այն հայտարարելով անընդունելի: Այսպիսով, նա դիմումատուներին գրկել է տարածքային դատական ատյան դիմելու հնարավորությունից:

Եզրակացություն. նախնական առարկությունը մերժվել է միաձայն:

## Փաստեր

Սելիսի գործում, 2008թ.-ի հունիսին, դիմումատուի մեքենան արձանագրվում է տեղադրված տեսախցիկով՝ թույլատրելի արագությունը 1կմ/ժ գերազանցելու համար և ավտոճանապարհային երթևեկության կանոնագրքի համաձայն վերջինս տուգանք է վճարում: Ժոզեմնի գործում, դիմումատուները հայր և որդի են: Մեքենան, որի սեփականատերը հանդիսանում է հայրը, սխալ կայանման համար տուգանքում է որդու անունով: Երկու գործերում էլ դիմումատուները վճարում են տուգանք, որից հետո դիմում են դատախազություն

բ) Գործի ըստ էության քննությունը- Հոդված 6 § 1: Դատարան դիմելու իրավունքը, որի անբաժան տարր է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ իր էությամբ: Այն ենթարկվել է այնպիսի սահմանափակումների, ինչպիսիք են օրինակ՝ վերաքննության կարգով բողոքի ընդունելիության հետ կապված հարցերը: Այնուամենայնիվ, այսպիսի սահմանափակումները չեն կարող սահմանափակել կամ նվազեցնել անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը այն աստիճան, որ խախտվի վերջինիս բոլն էությունը: Այդպիսի սահմանափակումները

պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ և պետք է ողջամիտ համամասնություն լինի ընտրված միջոցների և այն նպատակների մեջ, որոնց պետք է հասնել: Համաձայն, քրեական դատավարության օրենսգրքի, դատախազության մարմինները տուգանքից ազատելու դիմումի, ինչպես նաև՝ դրանց հետ կապված բողոք ներակայացնելու հարցի առնչությամբ, երեք տարբերակ ունեին. գործի քննությունը դադարեցնելու, գործը իրավասու դատարան ուղարկելու, կամ, երբ, դիմումի մեջ բացակայում են պատճառները կամ այն չի ուղեկցվում համապատասխան ծանուցմամբ՝ տեղեկացնելու դիմողին այն չընդունելու մասին:

*Սելիսի* գործով, դատախազությունը գտել է, որ դիմումը անընդունելի էր, իմանավորելով, որ այն իր մեջ խնդրանք է պարունակել լրացնելու տարամադրման, և չի հանդիսացել որպես արարքից իրաժարվելու բացահայտ միջոց: Սակայն, այդ պատճառաբանությունը սխալ է եղել, որովհետև դիմումատուն հստակ նշել է համապատասխան ձևաթղթի վրա, որ նա վիճարկել է այն արարքը, ինչի համար նրան մեղադրել են և նշել իմբերը տուգանքի ազատելու դիմումին կցված նամակի մեջ:

Բացի այդ, դատախազությունը գնահատական տալով անձի՝ իր արարքից բացահայտ իրաժարվելու կամ չիրաժարվելու հետ կապված, գործել է իր լիազորությունների շրջանակներից դուրս, այն ինչ պետք է որոշեր միայն ընդունելիության հետ կապված հարցը:

Բացի այդ, դիմումը չընդունելու մասին պաշտոնյայի կայացրած որոշմամբ, նախապես վճարված տուգանքի գումարի վրա բռնագանձում է սահմանվել, որով փաստորեն հաստատվել է տուգանքի մուծման փաստը: Հետևաբար, չնայած

դիմումատուի առարակություններին, վերջինիս տուգանքը համարվել է մուծված և գործը փակված, առանց իր դեմ բերված մեղադրանքի՝ դատարանի կոմիտ քննության առնելու հնարավորության, հոդված 6-ի §1 տրամաբանությունից ենելով, և առանց իր փաստարկները լսելու:

Բացի այդ, 2010թ. սեպտեմբերին Ֆրանսիայի Սահմանադրական Խորհրդությունը գտել է, որ տուգանքի վճարումից հրաժարվելու դիմումը չընդունելու մասին որոշման կայացմամբ, մինչ այդ մուծված գումարի գանձումը որպես տուգանք, և այդ որոշման դեմ դատավորին բողոք բերելու անհնարինությունը, հակասում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքին:

*Ժոզեմի* գործով, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է եղել, ընդունված դիմումի կատարման հետաձգվելը, ինչի մասին դատախազությունը պետք է անմիջապես տեղեկացներ Գանձապետարանին: Այն փաստը, որ տուգանքի բռանգանձման հետ կապված կատարողական վարույթը շարունակվել է, խոսում է այն մասին, որ դիմումատուի դիմումը չի ընդունվել: Բացի այն որ, դիմումատուի դիմումը մերժելու իմբերը պետք է լինեին քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված վերը նշված ոչ այն երկուսը, քանի որ այն իմանավորված է եղել և ուղեկցվել է համապատասխան ծանուցմամբ, այլ նաև դատախազությունը պատշաճ ձևով չի ծանուցել դիմումին դիմումը մերժելու որոշման մասին: Այսպիսով, այդ մարմինը գործել է իր լիազորությունների շրջանակներից դուրս, հնարավարություն չտալով դիմումատուին՝ բողոքարկելու իր

դեմ կայացված որոշումը դատական կարգով :

Այսպիսով, դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքի էռությունը խախտվել է :

**Եզրակացություն.** Խախտում (միաձայն):

Հոդված 41 : Խախտման ճանաչումն ինքնին բավարար է ոչ նյութական վնասի հատուցման համար Մեջիսի գործով. ժողեմի գործով այդ հարցի հետ կապված որևէ պահանջ դիմումատուները չեն ներկայացրել:

## Հոդված 6չ 2

**Ընդունելիություն**

**Լիցենզիայի մերժումը՝ ելնելով այն պատճառաբանությունից, որ այն կարող է օգտագործվել քրեական հանցագործություն կատարելու նպատակով՝ 6-րդ հոդվածը կիրառելի չէ**

*Bingol v. Netherlands*  
Բինգոլն ընդդեմ Նիդեռլանդների  
Թիվ 18450/07, Որոշում 20.3.2012  
[3-րդ բաժանմունք]

## Փաստեր

Դիմումատուին մերժել են տրամադրել օգտագործման լիցենզիա սննդի մատուցման և սպորտային օբյեկտներ մատուցելու համար, այն հիմքով, որ լուրջ վտանգ կա, որ լիցենզիան կօգտագործվի քրեական հանցագործությունների կատարելու կամ հանցագործությունների կատարումը շարունակելու համար: Այդ որոշումը հիմնված էր, *inter alia*,

օտարերկրացիներին անօրինական վարձելու համար դիմումատուի նախկին մեղադրանքի վրա և նրա ենթադրյալ կասկածելի վարքագծի համար: Եվրոպական դատարան ներկայացրած իր դիմումում, դիմումատուն պնդում էր 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անմեղության կանխավարկածի իր իրավունքի խախտման մասին:

## ԻՐԱՎՈՒՆՔ

### Հոդված 6չ2

Դիմումատուի բողոքը ուղղված չէր նրան, որ դատական կամ որևէ այլ որոշման ձևակերպումը հանգեցրել էր իրեն մեղավոր ճանաչելուն դատական հետապնդումից հետո, որի արդյունքում նա չդատապարտվեց, այլ ուղղված չէր նրան, որ օգտագործման լիցենզիայի տրամադրման մերժումը և այն ինքնին 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում էր, քանի որ հաշվի էր առնվել իր քրեական անցյալը: Դատարանը և Կոմիտեն ուշադրություն են դարձրել նախկին գործերին, որտեղ դատապարտելու և վճիռ կայացնելու նպատակով 6-րդ հոդվածը ներպետական դատարաններին չի արգելում հաշվի առնել առկա քրեական գրառումները: Անձի կողմից կոնկրետ նպատակների համար պահանջվող անկաշառության չափանիշները պահպանելու հարցը ուսումնասիրելիս, իրավասու իշխանությանը 6-րդ հոդվածի 2-րդ մասով վերոնշյալ գործողությունների կատարումն արգելելու համար սկզբունքային որևէ պատշաճ չկար: Ավելին, Դատարանը իր՝ ՄակՊառլանդ որոշման մեջ գտավ, որ ճանապարհային ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրման մերժումն այն հիմքով, որ դիմումատուի քրեական պատմությունը այնպիսինն էր, որ նա չէր

համարվի «լավ հեղինակություն» ունեցող անձ, 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի ընդգրկվում քրեական մեղադրանք հասկացության մեջ: Նմանատիպ պատճառաբանություններ են կիրառվել սույն գործով, որտեղ դիմումատուին մերժել են տրամադրել օգտագործման լիցենզիա այն հիմքով, որ հաշվի առնելով նրա քրեական անցյալը ենթադրվել է, որ վերջինս չէր կարող իրականացնել իր մտադրված բիզնեսը:

**Եզրակացություն՝ անընդունելի  
(անհամապատասխան *ratione materiae*)**

### **Անմեղության կանխավարկած**

**Մինչ վարչական մարմնի կողմից որոշում  
կայացնելը՝ հետաքննության  
հաշվետվության իրապարակումը  
մամուլում՝ անընդունելի**

**Societe Bouygues Telecom v. France  
Սոսիեթե Բույգու Թելեկոմ ընդդեմ  
Ֆրանսիայի, թիվ 2324/08  
Որոշում 13.3.2012  
(5-րդ բաժանմունք)**

Փաստ - Դիմումատու ընկերությունը ֆրանսիական շուկայում ներկա երեք շարժական հեռախոսային ընկերություններից մեկն է: Մրցակցային խորհուրդը և սպառողների մի ասոցիացիա վերջինիս մեղադրում է համընդիանուր նպատակ իրականացնելիս շուկայում չափից ավելի ուշադրություն իր կողմ կենտրոնացնելու վրա՝ դրանով խոչընդոտելով մրցակցային ազատ գործունեությանը: 2003թ.-ի ամռանից ի վեր սույն գործով Մրցակցության, Սպառողների

և Կեղծիքների վերահսկողության Գլխավոր տնօրինության (DGCCRF) կողմից հետաքննություն է վարվում: Դիտարկումների համար 2005թ-ի հունիսին գեկոյց է իրապարակում և տրամադրվում կողմերին: 2005թ.-օգոստոսին, թերթերը իրապարակում են տվյալներ՝ Մրցակցության, Սպառողների և Կեղծիքների վերահսկողության Գլխավոր տնօրինության (DGCCRF) գեկոյցից, որը տարածվում է տարբեր լրատվամիջոցների կողմից:

2005թ.-ի նոյեմբերին մրցակցային խորհուրդը մեղադրում է դիմումատու ընկերությանը շարժական հեռախոսների շուկայում հիսունութ միջին եվրո գումարի շրջանակներում հակամրցակցային գործունեություն իրականացնելու համար:

Իրավունք – Հոդված 6 § 2. Անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վարչական մարմինները կապ ունեն թե ոչ Մրցակցության, Սպառողների և Կեղծիքների վերահսկողության Գլխավոր տնօրինության (DGCCRF) գեկոյցի տարածման հետ: Հարկ է պարզել նաև թե արդյոք խնդրահարուց արտահոսքը կարող էր արդյոք վնասել դատավարության արդարացիությանը՝ ազդելով հասարակական կարծիքի վրա և նույնով մրցակցային խորհրդի անդամների վրա, որոնք հայտարարել են դիմումատու ընկերության մեղավորության վերաբերյալ:

Մամուլը ընդհանուր առմամբ չի ներկայացրել դիմումատու ընկերության մեղավորության վերաբերյալ տվյալներ, այլ առ առումով թեթև ակնարկ է հնչեցրել: Այնուամենայնիվ կարդացողը տեղեկանում էր գործի վերաբերյալ, սակայն ապակողմնորոշվում այն մասով, որ գործը դեռ ավարտված չէ:

**Ակտուն ընդեմ Թուրքիայի  
4149/04 և 41029/04  
Վճիռ 15.3.2012 [ՄՊ]**

Պատասխանող պետությունը ոչ մի պարտավորություն չէր կրում նախաձեռնության համար: Ի վերջո, պետությունը գործել է պատշաճ կերպով՝ դիմումատու ընկերության անմեղության կանխավարկածի երաշխիքը ապահովելու համար: Մրցակցության Խորհուրդը հանրապետության դատախազին տեղեկացրել էր Մրցակցության, Սպառողների և Կեղծիքների վերահսկողության Գլխավոր տնօրինության (DGCCRF) հաշվետվության մամուլի կողմից տարածման մասին, և այն, որ ինքը իր ինտեռնետային էջում հրապարակել էր որոշման վերաբերյալ մամլո հաղորդագրություն անմիջապես հաջորդ օրը, ի պատասխան մամուլի այն հորվածների, որոնք ընկերությանը հայտարարել էին դատապարտված, ինչպես նաև նշել էին ենթադրյալ տույժի չափը:

Ի վերջո վերջինիս մեղքը հաստատվում է, վերաբննիչ դատարանում, այնուինեւս Վճռաբեկում՝ խնդրահարուց տեքստը մամուլում շրջանառվելուց բավական ժամանակ անց:

Եզրակացություն. անընդունելի (հիմքերի բացակայության պատճառով) Դատարանը ընկերության հայցը համարում է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

## Հոդված 8

### Անձնական կյանքը հարգելու իրավունք

**Հրապարակումներ, որոնք ենթադրաբար վիրավորել են ցիգաններին՝ խախտում չկա**

*Aksu v. Turkey*

## Փաստեր

2000թ. մշակույթի նախարարը տպագրեց «Թուրքիայի ցիգանները» վերնագրով գիրք, որը գրվել էր կրտսեր պրոֆեսորի կողմից: Դիմումատուն առարկեց, բողոքեց, որ գիրքը պարունակում է ցիգաններին նվաստացնող և ստորացնող դիտողություններ և արտահայտություններ և հետևաբար նախարարության և գրքի հեղինակի դեմ վնասների հատուցման հայց հարուցեց: Առաջին ատյանի դատարը հայցը մերժեց գտնելով, որ գիրքը գիտական հետազոտությունների արդյունք է, իհմնված է գիտական տվյալների վրա և ուսումնասիրել է Թուրքիայում ցիգանների սոցիալական կառուցվածքը, և վիճարկվող արտահայտություննրեր չեն վիրավորում դիմումատուին: Այդ վճիռը պահպանվեց վերաբննության փուլում:

Միևնույն ժամանակ, դիմումատուն քաղաքացիական գործ հարուցեց ոչ-պետական միավորումների դեմ, որը մշակույթի նախարարության ֆինանսական աջակցությամբ հրապարակել էր երկու բառարան «Թուրքական բառարան աշակերտների համար» և «Թուրքական բառարան» վերնագրերով, որոնք դիմումատուի պնդմամբ պարունակում էին առանձին գրառումներ, որոնք վիրավորում և խտրականություն էին պարունակում ցիգանների նկատմամբ: Ներպետական դատարանները մերժեցին այդ բողոքը նույնպես՝ գտնելով, որ բառարանում ներառված հասկացությունները հիմնված են արտահայտությունները հիմնված են

պատմական և սոցոլոգիական իրականության վրա, և էթնիկ խմբին նվաստացնելու կամ ստորացնելու որևէ մտադրություն չի եղել: Ներպետական դատարանները նաև նշեցին, որ բառարաններում և հանրագիտարաններում կարող են հայտնաբերվել այլ էթնիկ խմբերին վերաբերող թուրքերեն լեզվում գործածվող նմանատիպ այլ արտահայտություններ:

2010թ. հուլիսի 27-ի վճռում (տե՛ս թիվ 132 նախադեպային տեղեկատվությունը), Դատարանի Պալատը չորսն ընդդեմ երեք ձայնի գտավ, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վերցրած 8-րդ հոդվածի հետ միասին որևէ խախտում տեղի չի ունեցել:

## ԻՐԱՎՈՒՆՔ

### Հոդված 8

#### (ա) Ընդունելիություն

Անկախ այն փաստից, որ Պալատը գործն ուառմասիրել է հոդված 14-րի շրջանակներում 8-րդ հոդվածի հետ միասին վերցած, Բարձր Պալատը գտավ, որ գործը չի վերաբերում վերաբերմունքի տարբերությանը կամ էթնիկ խտրականությանը, քանի որ դիմումատուն չի ներկայացրել *prima facie* ապացուց, որ վիճարկվող իրապարակումները խտրական պատակ են հետապնդել կամ այդպիսի ազդեցություն են ունեցել: Գործը, հետևաբար, համեմատելի չէ ցիզանների համայնքի անդամների կողմից նախկինում ներկայացրած դիմումների հետ:

Քննարկվող իիմնական խնդիրը վերաբերում էր վիճարկելի իրատարակությունների միջոցով դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքին ոչ համաչափ միջամտությանը: Այդ իսկ պատճառով գործն

ուսումնասիրվելու է միայն 8-րդ հոդվածի շրջանակներում:

(բ) Ընդունելիություն (զոհի կարգավիճակ)

Մեծ Պալատն համարել է, որ չնայած վիճարկելի դիտողությունները և արտահայտությունները անձնամբ չեն վերաբերել դիմումատուին, բայց նա կարող էր իրեն վիրավորված զգալ այն էթնիկ խմբի հասցեին արված դիտողությունների պատճառով, որին նա պատկանում էր: Հիմք ընդունելով այդ եզրակացությունը, ինչպես նաև այն փաստը, որ ներպետական քննությունների ժամանակ դիմումատուի վարկանիշի վերաբերյալ երբեմն վեճ չի ծագել՝ դիմումատուն կարող էր պահանջել, որ իրեն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հմաստով վիճարկված փաստերի շրջանակներում զոհ համարեն:

Եզրակացություն՝ նախնական առարկությունը մերժվել է (միաձայն):

#### (գ) Գործի ըստ էության քննությունը

(ի) Գործին վերաբերող դիմում. Դիմումատուի գործով արձարձվող իիմնական հարցը վերաբերում էր նրան, թե արդյո՞ք պատասխանող Կառավարությունն իրականացրել է դիմումատուի անձնական կյանքը գործի հեղինակի կողմից վիճարկելի միջամտությունից պաշտպանելու իր պոզիտիվ պարտավորությունը: Նմանատիպ գործերում, որտեղ 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտումը ծագել է այլ անձանց՝ իրենց արտահայտվելու ազատության իրավունքը իրականացնելու հետևանքով, Դատարանը անհրաժեշտ է համարում դիմումատուի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը հակաշռել արտահայտվելու ազատությունը պաշտպանելու հանրային շահի հետ: Մերժելով դիմումատուի հայցը դատական

Երկու ասյաններում թուրքական դատարանները հիմնվել են համալսարանի յոթ դասախոսների կազմած զեկույցի վրա, որոնք այդ գիրքը բնութագրել են որպես գիտական ուսումնասիրության վրա հիմնված ակադեմիական ուսմունք և համարել են, որ գոքի դիտողությունները և արտահայտությունները կրում էին ընդհանուր բնույթ, էին վերաբերում բոլոր ցիգաններին և չէին դիացում դիմումատուի անհատականությանը:

Այս եզրահանգումները անհիմն չէին կամ էլ հիմնված չէին խեղաթյուրված փաստերի վրա: Այսպիսով՝ օրինակ եթե հեղինակը մատնանշել է մասնավոր վայրերերու ապրող ցիգանների կողմից կատարած որոշակի անօրինական գործողություններ, ապա արդյո՞ք դրանով նա բացասական դիտարկումներ է արել բոլոր ցիգանների մասին կամ պնդել է, որ բոլոր ցիգանները անօրինական գործերով են զբաղվում: Ավելին, գոքի նախաբանում, ներածության մեջ և եզրակացությունում հեղինակը պարզ տերմիններով նշել է, որ ինքը նպատակ է ունեցել լուս սփռել ցիգանական համայնքի անձանոթ աշխարհի վրա, որը չափազանցվել և ուշադրության կենտրոնում է հայտնվել հիմնականում մինչդատական դիտարկումների արդյունքում: <Եղինակի հայտարարության կեղծավոր լինելու մասին ապացույցի բացակայության պարագայում պատճառաբանված կարել է համարել ներպետական դատարանների այն սահմանումը, որ հեղինակը ջանք է ներդրել իր աշխատանքի մեջ և որ իր աշխատանքը ռասայական նպատակներ չի հետապնդել: Դիմումատուն կարողացել է հայ ներկայացնել և իր գանգատի հետ կապված ձեռք բերել պատճառաբանված որոշումներ: Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներով հիմնարար իրավունքների վեճը

հակակշռելիս՝ թուրքական դատարանները եզրակացություն են արել՝ հիմնվելով Դատարանի հիմնավորված դատական պրակտիկայի վրա և իրենց գնահատման չափանիշները չեն սահմանազանցել կամ չեն անտեսել դիմումատուի անձնական կյանքը արդյունավետորեն հարգելու իենց պողիտիվ պարտավորությունների ապահովումը:

**Եզրակացություն՝ խախտում չկա (տասնվեց ձայն ընդդեմ մեկի)**

(ii) Բառարաններին վերաբերող դիմում. Բառարանը համարվում է լեզվի բառերը շարադրող և դրանց տարբեր իմաստներ հաղորդող տեղեկատվության աղբյուր՝ նկարագրական հիմնական աղբյուրը, բայց նաև պատկերավոր, բազմիմաստային փոխաբերական, որի հիմնական նպատակը հասարակության կողմից լեզվի կիրառման արտացոլումն էր: Վիճարկվող բառարանների ծավալը հսկայական էր և դրա նպատակը թուրքերեն լեզվի ամբողջական արտահայտումը էր: Դրանք պարունակում էին ոչ միայն «Ցիգան» բառի ուղիղ, այլ նաև բառի փոխաբերական նշանակությունը, ինչպես նաև խոսակցական թուրքերենով կիրառվող որոշակի արտահայտություններ, օրինակ՝ «Ցիգանական դրամ» և «Ցիգանական մեխակ»: Նախընտրելի կլիներ ամենօրյա խոսակցական արտահայտությունները վերնագրել որպես «Վատարանող» կամ «Վիրավորական», մասնավորապես այն բառարաններում, որոնք նախատեսված եղել են աշակերտների համար, քանի որ նման զգուշությունը կհամապատասխաներ նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի թիվ 10-րդ հանձնարարականին, որը սահմանում էր

աշակերտների միջև քննադատական բարելավման մտածողության Պետությունների պարտավորությունը: Ինչևէ, միայն այս տարրը Դատարանի համար բավարար չէր ներպետական դատարանների համար իմմնավորելու իր սեփական տեսակետը, հաշվի առնելով այն փաստը, որ քննարկվող բառարանը պաշտոնական դպրոցական ուսումնական պլանի մաս կազմող դպրոցական դասագիրը չէր: Ամփոփելով՝ նշենք, որ ներպետական մարմինները չեն սահմանազանցել իրենց գնահատման չափանիշները կամ չեն անտեսել դիմումատուի անձնական կյանքը արդյունավետորեն հարգելու իրենց պողիտիվ պարտավորությունների ապահովումը:

**Եզրակացություն՝ խախտում չկա (տասնվեց ձայն ընդդեմ մեկի)**

### **Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք**

**Երեխայի տեղավորումը անարգալից անցյալից ապագա որդեգրող ծնողի մոտ՝ խախտում չկա**

***Y.C. v. the United Kingdom  
Ուայ. Մին ընդդեմ Միացյալ  
Թագավորության  
Թիվ 4547/10***

**Վճիռ 13.3.2012 [4-րդ բաժանմունք]**

### **Փաստեր**

Դիմումատուն և իր մի քանի տարվա կենակիցը 2001թ. երեխա են ունենում:

2003թ. ընտանիքը, ծնողների միջև «ալկոհոլի չարաշահման» դեպքի պատճառով, արժանանում է սոցիալական ծառայությունների ուշադրությանը: Հետագայում ևս տեղի են ունենում տնային բռնության և ալկոհոլի չարաշահման դեպքեր, որոնց քանակը 2007թ. վերջին աճում է և որի հետևանքով տարբեր իրավիճակների պատճառով ուսիկանություն են կանչում իրենց տուն: 2008թ. այն բանից հետո, երբ ծնողների միջև հերթական վեճի արդյունքում տղան վնասվում է, տեղական մարմինները արտակարգ իրավիճակների պաշտպանության իրաման են ստանում: Այդ իրամանին հաջորդում է ժամանակավոր խնամքի իրամանը և տղային տեղավորում են դաստիարակչական կենտրոնում: Տղայի իրավունքները պաշտպանելու համար սահմանում են խնամակալ: Սոցիալական ծառայությունների, տղայի խնամակալի և հոգեբանի մանրամասն զեկուցների հետևանքով ժամանակավոր խնամքի իրամանը պարբերաբար երկարում էր: 2009թ. ապրիլին ընտանեկան քննությունների դատարանը որոշում է ամբողջական խնամքի և տեղավորման իրաման չտայ, այն բանից հետո, երբ դիմումատուին, որը պնդում էր, որ առանձնացել է երեխայի հորից, պետք է վերջին հնարավորություն տալ, որպեսզի նա երեխայի հորից առանձին ապրելու պարագայում կատարի իր ծնողական պարտավորությունը: Փոխարենը, մեկ այլ ժամանակավոր խնամքի իրաման է տրվում: Այդ իրամանը տեղական մարմինների և երեխայի խնամակալի վերաբննիչ բողոքի հիման վրա տայի է երկրի Դատարանը, այն բանից հետո, երբ դատավորը համարում է, որ «խնամքի իրաման տալու որոշումը հետաձգելը [կնշանակի] երկարաձել, և

այդպիսով վտանգել երկարատև տեղավորման այլընտրանք գտնելու գործընթացը»: Վերաբննիչ դատարանը քննության չի առնում դիմումատուի վերաբննիչ բողոքը և դիմումատուի որդուն 2010թ. տեղավորում են ապագա որդեգրող ծնողի մոտ:

## ԻՐԱՎՈՒՆՔ

### 8-րդ հոդված

Հետագա գնահատման և խնամքի ու տեղավորման հրաման տալու որոշման մերժումը, անկասկած, պարունակում էր դիմումատուի ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին լուրջ միջամտություն:

Միջամտությունը «օրենքին համապատասխան» է կատարվել և հետապնդել է երեխայի իրավունքը պաշտպանելու օրինաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք ժողովրդավարական հասարակությունում միջամտությունը անհրաժեշտ է եղել, Երկրի Դատարանի դատավորը, հաշվի առնելով երեխայի կարևորագույն շահերը, նշել է, որ հետագայում կատարվելիք յուրաքանչյուր գնահատական որոշակիորեն կխափաներ երեխայի դաստիարակման համար տեղավորումը, ինչպես նաև գնահատականի բացասական լինելու պատճառով կառաջացներ էմոցիոնալ վնասի ռիսկ:

Դատարանը համարել էր, որ դիմումատուին գնահատական տալով, երբեմ ի հնարավոր չեր լինի խնամքի հրամանի մերժումը արդարացնելու բավարար ապացույց ապահովել՝ հաշվի առնելով նրա թերությունները և երեխայի հոր հետ իր հարաբերությունները վերսկսելու իրական ռիսկը և միայն կերկարաձգեր և կվտանգեր երկարատև տեղավորում գտնելու հոյսերը: Հիմք ընդունելով գործի պատմությունը և

զեկույցները՝ անհիմն չի կարելի համարել դատավորի տեսակետը այն մասին, որ երեխայի հոր հետ դիմումատուի հարաբերությունների վերսկսումը հավանական տարբերակ էր և որը կարող էր ռիսկի ենթարկել երեխայի բարեկեցությունը: Հետևաբար, չնայած, որ երեխայի լավագույն շահերից էր բխում, որ իր ընտանեկան կապերը հնարավորինս ամուր լինեին, սակայն ներկայիս գործուած հատակ էր, որ այդ հանգամանքը չափասանցվել էր՝ ապահով և անվտանգ միջավայրում երեխայի զարգացումը երաշխավորելու կարիքից ենելով: Փորձեր են արվել ընտանիքը վերականգնելու համար՝ աջակցություն ցուցաբերելով ալկոհոլի չարաշահման խնդիրների հարցում և հնարավորություն են ստեղծել ծնողական պարտականությունները կատարելու համար: Պարզվում է, որ դիմումատուին, հետևյալ մանրամասները տրամադրելուց բացի, ներպետական բռնության վերաբերյալ աջակցության չեն ցուցաբերել: Սոցիալական աշխատակցի, խնամակալի և հոգեբանի կողմից պատրաստած զեկույցները մատնանշել են այն դժվարությունները, որոնք առաջացել են ծնողների՝ համապատասխան մարմինների հետ չկապնվելու արդյունքում:

Կայացնելով իր որոշումը՝ Երկրի Դատարանի դատավորը, ենելով 8-րդ հոդվածի պահանջներից, հաշվի է առել երեխայի լավագույն շահերը, բազմաթիվ համապատասխան փաստերը և մանրամասն հղում է կատարել սոցիալական աշխատակցի, խնամակալի և հոգեբանի զեկույցների և բանավոր ապացույցների վրա, որոնցից յուրաքանչյուրը այդ խնդիրները վտանգված է համարել: Դիմումատուին դատավորի որոշման պատճառների ցանկացած պարզաբանուած պատմությունը

պահանջելու և Վերաբննիչ դատարանում գործի հետագա վերանայման հնարավորություն են ընձեռել: Հետևաբար, տեղավորման մասին իրամանի որոշումը չի սահմանազանցել Պետության գնահատման չափանիշները և որոշման պատճառները պատշաճ էին և բավարար: Դիմումատուին ընձեռվել է իր գործը ներկայացնելու բոլոր հնարավոր միջոցները և դիմումատուին միանգամայն մասնակից են դարձրել որոշում կայացնելու գործընթացին:

**Եզրակացություն՝ խախտում չկա (վեց ձայն ընդդեմ մեկի):**

## ՀՈՂՎԱԾ 13

### Իրավական պաշտպանության արդյունավետ միջոց

**Կամավոր հոգեբուժական խնամքի ներքո գտնվող դիմումատուի որդու ինքնասպանության հետ կապված վնասերի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայություն՝ խախտում**

*Reynolds v. United Kingdom  
Ռեյնոլդսն ընդդեմ Միացյալ  
Թագավորության, թիվ 2694/08  
Վճիռ 13.3.2012 [4-րդ բաժանմունք]*

### Փաստեր

Դիմումատուի որդուն, ում ախտորոշել էին շիզոֆրենիա հիվանդությունը, 2005թ. մարտին բուժման նպատակով տեղավորում են հիվանդանոցում՝ մտավախություն

ունենալով, որ նա կարող է ինքնասպանություն գործել: Նրան, որպես կամավոր բուժվող հիվանդ, ընդունել են տեղական խորհրդի կողմից դեկապարվող հիվանդանոցում, ինտենսիվ կարիքավորների բաժնում, ճգնաժամային իրավիճակների համար նախատեսված սենյակում: Հիվանդանոցում գտնվելու առաջին գիշերը դիմումատուն ճգնաժամային իրավիճակների համար նախատեսված սենյակի պատուհանից դուրս է ցատկում և մահանում է: Անցկացվում է ներքին քննություն և հարցաքննություն, որի արդյունքում ճգնաժամային իրավիճակների համար նախատեսված սենյակների պատուհանները ամրացնելու հանձնարարական է տրվում: Դիմումատուն, այնուհետև, 1998 թվականին Մարդու իրավունքների ակտի համաձայն վնասների հատուցման հայց է ներկայացնում: Հայցը, ինչևէ, մերժվում է, քանի որ դատարանը համարում է, որ հայցը պատճառաբանված չէ և որ բժշկական անփությությանը վերաբերող գործերի ժամանակ հայցվորը պետք է առնվազն ապացուի կոպիտ անփութության վիճատը: Եվրոպական դատարանում ներկայացված դիմումում դիմումատուն բողոքել է, որ ինքը իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի ունեցել, որպեսզի կարողանար իր որդու մահման պատճառով առաջացած ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայց ներկայացնել:

### ԻՐԱՎՈՒՆՔ

**13-րդ հոդված 2-րդ հոդվածի  
համակցությամբ  
Դատարանը դիմումատուի որդուն  
ինքնասպանության իրական և անմիջական ռիսկից պաշտպանելու համար**

համապատասխան քայլեր ծեռնարկելու համար գործառնական պարտականության և այդ պարտականությունը չկատարելու վերաբերյալ հարցը վիճելի է համարել:

Հարցաքննությամբ մամրամասն քննվել է դիմումատուի որդու մահվան փաստերը, բայց հնարավոր չի եղել անհատական քաղաքացիական պարտավորության վերաբերյալ քննություն իրականացնել: Մարդու իրավունքների ակտի համաձայն ներկայացված դիմումատուի հայցը մերժվել է քանի որ դիմումատուն հայց ներկայացնելու համար պատճառաբանված հիմք չի ունեցել: 2012թ. փետրվարից հետո միայն Գերազույն Դատարանը առանձին գործով հաստատեց, որ պաշտպանության գործառնական պարտավորություն կարող է ծագել, այն հիվանդների նկատմամաբ, որոնք ենթարկված էին ինքնասպանության ռիսկի և վերաբերում են կամավոր հոգեբուժական հիվանդներին, ինչպիսին որ դիմումատուի որդին էր, և որ նրանց ծնողները, ովքեր նման իրավիճակներում երեխա են կորցրել, ոչ նյութական վնասի փոխհատուցում ստանալու իրավունք կունենան: Ինչևէ, մինչ 2012թ. դիմումատուն ոչ նյութական վնասի փոխհատուցման հետ կապված իրավական պաշտպանության որևէ արդյունավետ միջոց չի ունեցել:

### **Եզրակացություն՝ խախտում (միաձայն):**

Հոդված 41՝ 7,000 եվրո ոչ նյութական վնաս:

### **ՀՈԴՎԱԾ 14**

#### **Խտրականություն (5§1 հոդված)**

**Փակ ուղղիչ հիմնարկում ազատազրկումը կրելու ժամանակ դիմումատուի**

**օտարերկրյա քաղաքացի լինելու պատճառով ողջիալական թերապիայի կամ հանգստի պայմանների մերժում՝ իախսում**

*Rangelov v. Germany*  
**Ռանգելովն ընդդեմ Գերմանիայի**  
**Թիվ 5123/07**  
**Վճիռ 22.3.2012 [5-րդ բաժանմունք]**

### **Փաստեր**

Դիմումատուն՝ Բուլղարիայի քաղաքացի էր և մի քանի անգամ դատապարտվել էր գողություն և կողոպուտ հանցանքների համար: Գերմանիայի պետական մարմինները հրամայել են, որ դիմումատուն 2003թ. հունիսին, իր վերջին ազատազրկման ժամկետի ավարտից անմիջապես հետո արտաքսվի երկրից: Ինչևէ, մինչ այդ օրը նրան պահել են փակ ուղղիչ հիմնարկում, այն պատճառաբանությամբ, որ նա չէր զուգում իր կատարած հանցնանքների համար և հավանականություն կար, որ նա այլ հանցանքներ էլ կգործի: Զնայած դիմումատուին սոցիալական թերապիա էին նշանակել, բայց քանի որ նա օտարերկրյա քաղաքացի էր, չէր կարող մասնակցել թերապիային: Նույն պատճառներով նրան պահելու պայմանները չեր հարմարեցվել ուղաքացիային: Եվրոպական դատարան ներկայացրած իր դիմումում, դիմումատում, ի թիվս այլոց, բողոք է ներկայացրել քաղաքացիության պատճառով դրսնորված խտրականության դեմ:

### **ԻՐԱՎՈՒՆՔ**

14-րդ հոդվածը 5§1 հոդվածի  
համակցությամբ

Որպեսզի պարզվի, թե արդյոք դիմումատուի նկատմամբ դրսորվել է այլ վերաբերմունք իր քաղաքացիության պատճառով, փակ ուղղիչ հիմնարկից արտաքսելու հետ կապված, անհրաժեշտ է ուսումնասիրել ներպետական դատարանների կողմից այդ հրամանը տալու պատճառները։ Չնայած նրանք համարել էին, որ եթե դիմումատուն ցանկանում էր ապացուցել, որ ինքը հասարակության համար այլս վտանգ չէր ներկայացնում, նա պետք է հաջողությամբ ավարտեր սոցիալական թերապիան, բայց իր անխուսափելի արտաքսման պատճառով այս պայմանը մերժվել էր։ Ներպետական դատարանի քննության արդյունքում նաև պարզվել էր, որ ուղղիչ հիմնարկի վարչակազմը հազիվ թե դիմումատուի փակ ուղղիչ հիմնարկի պայմանները համապատասխանեցներ ուղարքացիայի պայմաններին, քանի որ դիմումատուն Գերմանիայի քաղաքացի չէր։ Դատարանի համար համոզիչ չէին կառավարության ներկայացրած փաստարկները այն մասին, որ թերապիան մերժել էին դիմումատուի պահվածքի և վարքի պատճառով։ Ներպետական վարչական պրակտիկան պարզորոշ ցույց է տվել, որ այն բանտարկյալները, որոնց վերաբերյալ կիրառվելիք արտաքսման հրաման կա, բացառակ էր սոցիալական թերապիայի ինստիտուտ տեղափոխելու հնարավորությունը, և քանի որ սա պարզ էր նաև դիմումատուի համար, դա կարող էր փոքր ինչ ազդել դիմումատուի պահվածքի փոփոխության վրա։ Դատարանը այդ իսկ պատճառով եզրակացրեց, որ դիմումատուի նկատմամբ իր քաղաքացիության պատճառով, համեմատած այլ բանտարկյալների հետ, որոնք նմանատիպ հրավիճակում էին գտնվում, այլ վերաբերմունք են ցուցաբերել։

Այն պատճառաբանությունը, որով օտարերկոյա քաղաքացիներին բացառում էին տրամադրել սոցիալական թերապիա, այն էր, որ թերապեվտները չին կարող դատապարտյաներին այլ երկրի, իրենց անձանոթ կենսապայմաններով կյանքի համար պատրաստել։ Ակներև էր, որ օտարերկոյա քաղաքացիների ազատագրկման պայմանների ուղարքացիայի նպատակը նրանց ազատագրկումից խուսափելուց կանխելը և արտաքսման հրամանի կատարումը երաշխավորելն էր։ Դատարանը կրկնում է, որ այդ ծանրակշիռ պատճառները պահանջվում էր քաղաքացիության պատճառով վերաբերմունքի տարբերությունը արդարացնելու համար։ Դիմումատուին թերապեվտիկ միջոցառումներ տրամադրելուց հրաժարվելը, սովորաբար անհրաժեշտ էր լինում, որպեսզի կասեցնեին հրամանը, քանի որ փակ ուղղիչ հիմնարկում ազատագրկումը այլ թերապիայով կամ դիմումատուի հրավիճակի համար հարմար այլ միջոցներով չէր փոխհատուցվում։ Նման հրավիճակում դիմումատուի նկատմամար տարբերակված վերաբերմունքը իր մեջ օբյեկտիվ արդարացում չէր ներառում։

**Եզրակացություն՝ խախտում (միաձայն) :**

#### **Հոդված 41**

6,000 եվրո՝ ոչ նյութական վնասի փոխհատուցում։ Նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ գանգատը մերժվել է։

(տե՛ս, նաև, *Օսդերմունքներն ընդդեմ Գերմանիայի*, թիվ 36035/04, 22 մարտ 2012թ.)

## **Խորականություն (8 հոդված)**

**Երեխայի խնամքի համար տրամադրվող  
արձակուրդի իրավունքի վերաբերյալ  
իգական և արական գինվորական  
անձնակազմի միջև տարբերություն՝  
խախում**

**Konstantin Markin v. Russia  
Կոնստանտին Մարկինն ընդդեմ  
Ռուսաստանի  
Թիվ 30078/06  
Վճիռ 22.3.2012 [ՄՊ]**

### **Փաստեր**

Ըստ ռուսական օրենքի՝ քաղաքացիական ծառայություն իրականացնող հայրերը և մայրերն իրենց մանկահասակ երեխաներին խնամելու համար երեխայի խնամքի համար տրամադրվող երեք տարվա արձակուրդի և այդ ժամանակահատվածի համար ամսեկան վճարվող նպաստի իրավունք ունեն: Այս իրավունքը հատկապես տարածված է իգական սեռի գինվորական անձնակազմի համար, բայց արական սեռի անձնակազմի համար որևէ նման դրույթ գոյություն չունի: Դիմումատուն, որն ամուսնալուծված էր և գինվորական ուժերում ռադիոտեխնիկայի հետախուզման օպերատոր էր, դիմել է երեխայի խնամքի համար տրամադրվող երեք տարվա արձակուրդի համար, որպեսզի զբաղվի իր ամուսնության ընթացքում ծնված երեք երեխաների դաստիարակությամբ, բայց նրա դիմումը մերժում են՝ պատճառաբանելով, որ ներպետական օրենսդրությունը նրա դիմումի համար նման հիմք չի սահմանում:

Նրան, արդյունքում, տրամադրում են մոտ երկու տարվա երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ, ի հավելումն իր վերադասների կողմից տրամադրված դրամական աջակցության, քանի որ նա գտնվում էր դժվար անձնական կացության մեջ: Նա, այնուամենայնիվ, դիմում է ներկայացնում Սահմանադրական դատարան, որտեղ նշում է, որ օրենսդրությունը չի համապատասխանում սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների հավասարությանը: Սահմանադրական դատարանը, մերժելով դիմումը, սահմանել է, որ գինվորական ծառայության մեջ գտնվող տղամարդկանց խնամքի համար տրամադրվող արձակուրդի արգելումը պայմանավորված է գինվորական անձնակազմի իրավական հատուկ կարգավիճակով և գինվորական անձնակազմի մեծ քանակով բացակայությունից և իրենց պարտականությունները կատարելու անհնարինությունից խուսափելու պատճառով: Սահմանադրական դատարանը նշել է, որ գինվորական ծառայության մեջ գտնվող տղամարդիկ կամավոր կերպով ընդունել են իրենց գինվորական ծառայության կարգավիճակի հետ կապված պարտավորությունները և իրենց երեխաներին անձանմբ խնամելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում իրավունք ունեին վաղ դադարեցնելու իրենց ծառայությունը: Զինվորական ծառայության մեջ գտնվող կանանց երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի իրավունք տրվում էր բացառության կարգով, որը պայմանավորված էր գինվորական ծառայության մեջ կանանց սահմանափակ մասնակցությամբ և մայրության հետ կապված կանանց հատուկ սոցիալական դերով:

2010թ. հոկտեմբերի 7-ի վճռում (տե՛ս Տեղեկատվական գրառումներ թիվ 134) Դատարանի Պալատը վեց ձայնով ընդդեմ 1-ի սահմանեց, որ 14-րդ հոդվածի խախտում է տեղի է ունեցել 8-րդ հոդվածի համակցությամբ:

## ԻՐԱՎՈՒՆՔ

**14-րդ հոդված 8-րդ հոդվածի  
համակցությամբ**

Երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը և երեխայի խնամքի համար տրամադրվող նպաստը 8-րդ հոդվածի շրջանակներում է սահմանվում, քանի որ դրանք նպաստում են ընտանեկան կյանքին և անշուշտ ազդեցություն են գործում դրա կազմավորման վրա: Այսպիսով Կոնվենցիայի 14-րդ հոդվածը կիրառելի է (8-րդ հոդվածի համակցությամբ): Երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի և երեխայի խնամքի համար տրամադրվող նպաստի կապակցությամբ տղամարդիկ նոյն իրավիճակում էին, ինչ՝ կանայք (հակառակ հղիության և ծննդաբերության արձակուրդին): Հետևաբար, որպես զինվորական ծառայության մեջ գտնվող տղամարդ դիմումատուն նոյն իրավիճակում էր, ինչ որ զինվորական ծառայության մեջ գտնվող կապակությունը կանայք: Այսպիսով Դատարանը պետք է որոշեր, թե արդյո՞ք երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի կապատցությամբ ծառայության մեջ գտնվող տղամարդկանց և կանանց նկատմամբ վերաբերմունքի տարբերությունը հիմնավորված և օբյեկտիվորեն արդարացված էր:

Այդ կապակցությամբ Դատարանը նշել է, որ սեռական հավասարության բարելավումը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար այժմ առաջնային

նպատակ է հանդիսանում և շատ կարևոր պատճառներ պետք է ներկայացվեն, որպեսզի սեռական հինքերով վերաբերմունքի տարբերությունը համապատասխանի Կոնվենցիային: Մասնավորապես, բավարար չի լինի միայն սովորություններին հղում կատարելը, ընդհանուր եզրահանգումները կամ մասնավոր պետություններում գերիշխող սոցիալական վարժագծերը:

Դատարանի համար ընդունելի չէ այն, որ դիմումատուի գործով վերաբերմունքի տարբերության համար կարող է արդարացում լինել, ինչպես որ Կառավարությունը պնդել էր, կանանց երեխա դաստիարակելու հատուկ սոցիալական դերը: Ժամանակակից Եվրոպական հասարակությունները կանանց և տղամարդկանց միջև իրենց երեխաների դաստիարակության

պատասխանատվության հավասար բաժանման վերաբերյալ առաջ են շարժվել և տղամարդկանց՝ իրենց երեխաներին խնամելու դերը, ճանաչում է ձեռք բերել: Եվրոպական երկրների մեծամասնությունը, ներայալ Ռուսաստանը, այժմ և՛ քաղաքացիական ծառայության մեջ գտնվող տղամարդտանց, և՛ կանանց երեխայի խնամքի համար արձակուրդ են տրամադրում և մեծ թվով երկրներ նաև տարածել են այդ իրավունքը զինվորական ծառայության մեջ գտնվող և՛ տղամարդտանց, և՛ կանանց վրա: Դիմումատուի գործով տարբերակված վերաբերմունքը չի կարող դիտվել որպես դրական խտրականություն ի օգուտ կանանց, քանի որ դա ուղղված չի եղել հասարակության մեջ կանանց անբարենպաստ դրությունը վերափոխելուն: Փոխարենը, դա սեռական կարծրատիպը երկարաձգելու արդյունք է ունեցել և

անբարենպաստ էր և՝ կանանց կարիերայի, և՝ տղամարդտանց ընտանեկան կյանքի համար: Ամփոփելով, պետք է նշել, որ հասարակության մեջ սեռերի դերի սովորության բաժանման վրա հղում կատարելը չի կարող արդարացնել տղամարդկանց, ներառյալ ծառայության մեջ գտնվող տղամարդկանց երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից բացառելու հանգամանքը:

Ո՞չ Կառավարության այն փաստարկը, որ գինվորական ծառայության երկարատև երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը պայքարող ուժի վրա կարող է բացասական ազդեցություն ունենալ, ո՞չ էլ գինված ուժերի օպերատիվ արդյունավետությունը Դատարանի համար համոզից չեղան: Ռուսական մարմինները, ծառայության մեջ գտնվող տղամարդկանց, ովքեր կկարողանային կամ կցանկանային երեք տարվա երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ վերցնել, քանակը գնահատելու համար որևէ փորձաքննական ուսուցում կամ ուսումնասիրություն չեն իրականացրել, որպեսզի որոշեին, թե դա ինչ ազդեցություն կունենար օպերատիվ արդյունավետության վրա: Նրանց ներկայացրած վիճակագրական տեղեկատվությունը համոզիչ չէր: Այն միակ փաստարկը, որ ծառայության մեջ գտնվող տղամարդիկ «երեխա դաստիարակելու տարիքում» էին բավարար չէր ծառայության մեջ գտնվող տղամարդկանց և կանանց միջև վերաբերմունքի տարբերությունը արդարացնելու համար: Դատարանը, այնուամենայնիվ, ընդունեց, որ, կարևորելով ազգային անվտանգության պաշտպանության համար բանակի դերը, երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի իրավունքի համար կարող են

որոշակի սահմանափակումներ արդարացված լինել, եթե դրանք իրենց մեջ խտրականություն չեն պարունակում: Այսպիսով, օրինակ, գինվորական անձնակազմը թե՛ տղամարդ, թե՛ կին կարող է զրկվել երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի իրավունքից, եթե նրանց հետորեն չի կարելի փոխարինել՝ կապված նրանց հիերարխիկ պաշտոնի, հազվագյուտ տեխնիկական որակավորման կամ ակտիվ գինվորական գործողությունների մեջ ներառված լինելու հետ: Ինչևէ, Ռուսաստանում երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի իրավունքից բացառելը ավտոմատ կերպով վերաբերում էր բոլոր գինվորական ծառոյններին, անկախ բանակում իրենց դիրքից, փոխարինելու հնարավորությունից կամ իրենց անձնական իրավիճակից: Դատարանի կարծիքով սեռի պատճառով նման ընդհանուր և ավտոմատ սահմանափակումը վերաբերում էր մի խումբ մարդկանց, որը դուրս էր Պետության ընդունելի հայեցողության սահմանից: Դիմումատուն գինվորական ուժերում ռադիոտեխնիկայի հետախուզման օպերատոր էր և հետևաբար կարող էր փոխարինվել որևէ ծառայության մեջ գտնվող տղամարդու կամ կնոջ կողմից: Հատկանշական է, որ նրա բաժնում նմանատիպ պաշտոնները հաճախ զբաղեցնում էին գինվորական ծառայող կանայք, ովքեր, ի տարբերություն իրեն, երեխայի խնամքի համար տրամադրվող երեք տարվա առանց պայմանների արձակուրդի իրավունք ունեին: Այդ իսկ պատճառով դիմումատուն սեռական հիմքով ենթարկվել է խտրականության առանց հիմնավոր և օբյեկտիվ արդարացման: Սեռական հիմքերով խտրականության արգելման կարևորության համար բավական

չէ այն, որ դիմումատուն գինվորական պայամանագիր է ստորագրել, որը չի կարող սահմանել դրույթ, որի շնորհիվ դիմումատուն չի ենթարկվի խտրականության:

**Եզրակացություն՝ խախտում (տասնվեց ձայն ընդդեմ մեկի):**

34-րդ հոդված. Դիմումատուն բողոքել է, որ այն ժամանակ, երբ իր դիմումը գտնվում էր Եվրոպական Դատարանում, նրան առանց գգուշացնելու իր տուն այցելեց մի դատախազ, որը պահանջում էր դիմումատուի գործի վերաբերյալ տեղեկատվություն: Դատարանը նշում է, որ Դատարանում գտնվող դիմումատուի գործի վերաբերյալ իր հետ ուղիղ կապի մեջ մտնելը, սկզբունքորեն, պատասխանող Պետության պետական մարմինների կողմից անպատճե էր: Ինչևէ, ներկայիս գործում որևէ ապացուց չկար այն մասին, որ դատախազի այցը դիմումատուի տուն իր ընտանեկան դրության մասին թարմ տեղեկություն ձեռք բերելու նպատակով դրդել է դիմումատուին հրաժարվել իր դիմումից կամ էլ վերանայել իր գանգատրը, կամ էլ այդ այցը նման ազդեցություն է ունեցել: Հետաքար, չի կարելի համարել, որ պետական մարմինները խոչընդոտել են, դիմումատուի անձնական հայց ներկայացնելու իրավունքի իրականացմանը:

### **Եզրակացություն՝**

համապատասխանություն 34-րդ հոդվածին (տասնչորս ձայն ընդդեմ երեքի):

### **Հոդված 41**

3,000 եվրո՝ ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Երեխայի որդեգրման մերժումը մի կնոջ, ով երեխայի բիոլոգիական մոր հետ ապրում է որպես հոմոսեքսուալ գույզ՝ խախտում չկա

***Gas and Dubois v. France  
Գասը և Դյուբուան ընդդեմ Ֆրանսիայի –  
25951/07***

**Վճիռ 15.3.2012 [5-րդ բաժանմունք]**

### **Փաստեր**

Դիմումատուները Ֆրանսիայի երկու քաղաքացիներ են, ովքեր 1989թ.-ից ի վեր ապրում են միասին որպես հոմոսեքսուալ գույզ և 2002թ.-ից ի վեր կնքել են համերաշխության քաղաքացիական պակտ (PACS): 2000թ.-ի սեպտեմբերին, դիմումատուներից մեկը անանուն տղամարդուց, արհեստական բեղմնավորման միջոցով Ֆրանսիայում ծննդաբերում է մի առջիկ երեխա:

2006թ.-ի մարտին առաջին առաջին դիմումատուն իր կողակցի հատուկ համաձայնությամբ որդեգրման հայց է ներկայացնում նրա աղջկան որդեգրելու համար: Առաջին ատյանի դատարանը, չնայած հաստատելով, որ որդեգրման համար առկա էին բոլոր օրինական պայմանները մերժում է այն, մեկնարանելով, որ որդեգրման հետևանքները չեն համապատասխանի այն սպասումներին, որ ունեն դիմումատուները և կիակասեն երեխայի շահերին, քանի որ բիոլոգիական մոր ծնողական պարտավորությունները կարող են ակամայից անցնել որդեգրողին, որով բիոլոգիական մայրը կզրկվի երեխայի հանդեպ ունեցած իր իրավունքներից:

Առաջին դիմումատուն հայց է ներկայացնում վերաբննիչ դատարան:

Վերաբննիչ դատարանը մերժում է հայցը և հաստատում, որ հայցվող որդեգրման օրինական հետևանքները կիակասեն երեխայի շահերին :

## ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 14 գուգակցված հոդված 8-րդով:

Դիմումատուները սույն գործում բոլորել են սովորական որդեգրման մերժման դեմ: Չլինելով ամուսնացած նրանք չեն կարող կիսել ծնողական պարտավորությունները: Ինչպես նաև, սույն գործում, որդեգրման օրինական հետևանքները հակասում են երեխայի շահերին, քանի որ որդեգրողը երեխայի բիոլոգիական մոր հետ պետք է կիսեր ծնողական պարտավորությունները՝ ակամայից զրկելով բիոլոգիական մորը իր իրավունքներից՝ այն դեպքում երբ վերջինս դրանից չէր իրաժարվում:

Ինչ վերաբերում է անանուն դռնորով արհեստական բեղմնավորմանը, ֆրանսիայում այն թույլատրվում է միայն անպտղաբեր հետերոսեքսուալ զոյգերին, իրավիճակ, որը չի առնչվում դիմումատուներին:

Սրանից հետևում է, որ ֆրանսիական վերարտադրման այս մեթոդին վերաբերող օրենսդրությունը, չի վերաբերում դիմումատուներին և չի համարվում խտրական վերաբերմունք դիմումատուների հանդեպ, որի տուժող կիամարվեին նրանք :

Ինչ վերաբերում է դիմումատուների իրավաբանական իրավիճակին, որում նրանք իրավունք չունեն ամուսնանալ այլ ամուսնացած զոյգերի համեմատությամբ միայն քաղաքացիական համերաշխության պակտ /PACS/-ով սահմանափակվել, Կոնվենցիան չի պարտադրում անդամ երկրների կառավարություններին

հոմոսեքսուալ զոյգերին թույլատրել ամուսնանալ, այն պարագայում, երբ առկա է իրավաբանական ճանաչման այլ ձև: Կառավարություններն օգտվում են կարգավիճակի շնորհման բնույթի որոշակի սահմաններից, թի ինչ կարգավիճակ շնորհել:

Ամուսնության իրավունքի իրացումը պաշտպանվում է Կոնվենցիայի 12-րդ հոդվածով և բերում է սոցիալական, անձնական և իրավաբանական հետևանքների:

Այսպիսով, որդեգրում իրականացնելու համար, դիմումատուների ամուսնական կարգավիճակը նման չէ ամուսնացած զոյգերի կարգավիճակին: Այսպիսով, ուսումնասիրելով նրանց իրավիճակը քաղաքացիական համերաշխության պակտ /PACS/ կնքած հետերոսեքսուալ այլ զոյգերի համեմատությամբ, վերջիններիս արգելվում է սովորական որդեգրման հնարավորությունը, որը հիմնված չէ սեքսուալ կողմնորոշման վրա և չի կրում խտրականության բնույթ, վերջիններիս մոտ առկա չէ անպտղաբերություն:

Ենելով քաղաքացիական օրենսգրքի 365-րդ հոդվածի նպատակից, որը կարգավորում է սովորական որդեգրման դեպքում ծնողական պատասխանատվության փոխանցման հետ կապված հարցերը, ոչ մի արդարացում չկար վիճարկելով վերոհիշյալ նորմի կիրառումը, արտոնել սահմանելու կրկնակի ծնողական կապ երեխայի հետ:

Եզրահանգում խախտում չկա (վեց ձայն ընդդեմ մեկի):

**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀՈԴՎԱԾ 10)\_\_\_\_\_**

**Ընտրություններ՝ քրեական  
դատավարությանը մասնակցելուն  
իրավասու լրագրողներին ցուցակագրելով՝  
անդնդունելի**

*Axel Springer AG v. Germany  
Ակտել Սպրինգեր ԱԳ ընդդեմ Գերմանիայի  
Թիվ- 44585/10  
Որոշում 13.3.2012 [5-րդ բաժանմունք]*

**Փաստեր**

Երկու մարդ մեղադրվել են ամուսնական գոյգի և նրանց երկու դուստրերի սպանության ու մի քանի գողությունների կատարման մեջ: Համաձայն Անչափահասների գործերով դատարանների մասին օրենքի, դատաքննությունը իրապարակային չէր քանի որ գողությունների կատարման ժամանակ մեղադրյալները անչափահաս էին: Համայնքային դատարանի անչափահասների գործերով քրեական բաժնի պետը սահմանել էր դատաքննությանը ներկա գտնվելու իրավասություն ունեցող լրագրողների քանակն առավելագույնն՝ ինը անձ: Որոշվել էր ընտրությունների ընթացքը, որտեղ լրագրողները բաժանվել էին երեք խմբի, որոնցից յուրաքանչյուրը ներգրավված էր երեք տեղ: Առաջին խումբը վերաբերվում էի տարածաշրջանային իրատարակչական լրատվամիջոցներին, երկրորդը՝ վերտարածաշրջանային իրատարակչական լրատվամիջոցներին, կամ մամլո ծառայություններին, և երրորդը՝ հեռուստատեսությանը և ռադիոյին (և հանրային, և մասնավոր հեռարձակողներին): Մամուլի քառասուն ներկայացուցչներ հետագայում հայտնել են դատավարությանը մասնակցելու ցանկություն: Այդ հարցի լուծումից հետո դիմումատու

ներկայացուցչի, ով գրում էր ազգային ամենօրյա թերթ *Բիլլ-ի* համար, չհաջողվեց տեղ ծեռք բերել: «Վերտարածաշրջանային իրատարակչական լրատվամիջոցներ»-ի բաժնի համար ընտրված լրագրողներից երկուսը աշխատում էին շաբաթական ամսագրերի համար, իսկ երրորդը հանդիսանում էր մամլո ծառայության ներկայացուցիչ: Դիմումատու կազմակերպությունը բողոք է ներկայացրել բաժնի պետին ընտրությունների անցկացման համար օգտագործված մեթոդի առնչությամբ՝ գանգատվելով, որ վերտարածաշրջանային ամենօրյա թերթից որևէ լրագրող չէր ընտրվել այն խմբի մեջ, որին նա պատկանում է: Նա խնդրեց, որ տեղերը վերաբաշխվեն և առաջարկեց «կուտակային» (pool) համակարգը, որպեսզի դատավարությանը մասնակցելու համար ընտրված մամուլը չունենա տեղեկատվության մենաշնորհ: Բաժնի պետը մերժեց այդ պահանջը: Դաշնային Սահմանադրական Դատարանը մերժել է դիմումատու կազմակերպության սահմանադրական բողոքը, գտնելով, որ այդ կազմակերպությունը չի ունեցել լուրջ կորուստ և որ գործի մասնավոր հանգամանքներում այդ գանգատը հիմնարար կարևորություն չունի:

**ԻՐԱՎՈՒՆՔ**

Հոդված 14-ը Հոդված 10-ի հետ միասին վերցված: Ճնայած լրատվամիջոցների կողմից տեղեկատվության առանձին աղբյուրի հասանելիության որևէ *per se* իրավունք չի կարող դուրս բերվել կոնվենցիայից, դատական նիստերի դահլիճից դիմումատու կազմակերպության վտարումը այն ժամանակ, երբ այլ լրագրողներին թույլատրվել էր այնտեղ գտնվել, ընկնում է 10-րդ հոդվածի

շրջանակների մեջ: Բաժնի պետը քաջ տեղյակ էր այս դատավարության մեջ լրատվամիջոցների հետաքրքրվածության մասին և դրա մասին տեղեկացված լինելու հանրային շահի մասին՝ չնայած մեղադրյալների տարիքի հետ կապված դատավարության հանրային բնույթի սահմանափակումներին: Դիմումատու կազմակերպությունը, ավելին, գիտակցու էր դրա մասին, քանզի վերջինս չէր բողոքարկել դատական նիստի դահլիճ մուտք գործելու միայն սահմանափակ թվով լրագրողներին թույլատրելու մասին որոշումը: Այն բողոքարկել էր մասնակից լրագրողների ընտրության մեթոդը, ինչն իր կարծիքով, հանդիսանում էր խորականություն իր դեմ (և այլ հրատարակչական լրատվամիջոցների հանդեպ, որոնք չին ընտրվել); սրանից կարելի էր խուսափել կամ կիրառելով «կուտակային» (pool) համակարգ (քանի դեռ ամենօրյա թերթի լրագրողի ներկայությունը երաշխավորված է) կամ ընդունելով միայն մամլո կազմակերպությունների համար աշխատող լրագրողներին: 14-րդ հոդվածի նպատակներից ենելով դիմումատու կազմակերպությունն ենթարկվել է տարբերվող վերաբերմունքի այնքանով, որքանով դա վերաբերվում է «ցանկացած այլ կարգավիճակի», քանի որ այն դրվել էր ավելի քիչ բարենպաստ պայմանների մեջ քան միևնույն խմբի հրատարակչական լրատվամիջոցները, որոնց լրագրողներին թույլատրվել էր մտնել դատական նիստի դահլիճ: Մի շարք տեղերի վրա սահմանափակումները, և այն հավանականությունը, որ որոշ լրագրողներ չեն ընտրվի հետապնդում էր որոշ հանցանքների ենթադրյալ կատարման ժամանակ անշափաս հանդիսացող մեղադրյալների շահերի պաշտպանության

իրավաչափ նպատակը: Ինչ վերաբերվում է այն հարցին, թե արդյոք կիրառված մեթոդները ողջամտորեն համաչափ էին հետապնդվող նպատակին, մեծամասամբ ընտրության մեթոդը ընդունակ չէր որևէ առանձին մամուլի ներկայացուցչի օգտին լինելուն, քանի որ այն տրամադրել էր բոլոր շահագրգիռ լրագրողներին առկա տեղերի բաշխման չեզոք ընթացակարգին հավասարապես հասանելիություն: Դիմումատու կազմակերպությունը չէր ստեղծվել խոչընդոտ դատավարության վերաբերյալ զեկուցելու հանդեպ, քանի որ համայնքային դատարանը հրապարակել էր մամլո հաղորդագրություն դատավարության յուրաքանչյուր օրվա ավարտին. իրոք, դատավարությանը ներկա գտնվող լրագրողներն իհմնվում էին մամլո հաղորդագրությունների վրա, որպես նրանց տեղեկատվության միակ աղբյուր այն դատական նիստի մասին, որից բոլոր մամլո ներկայացուցիչները բացառվել էին: Վերտարածաշրջանային հրատարակչական լրատվամիջոցների բաժնում ընտրված լրագրողները ներառել էին մամլո ծառայության թղթակից, որի գիշավոր գործառույթն էր այլ լրատվամիջոցներին տեղեկատվության հասանելիության ապահովումը (վճարի դիմաց): Այդպիսով, չի կարելի պնդել, որ դիմումատու կազմակերպությունը չէր կարող տեղեկացնել իր ընթերցողներին դատավարության մասին: Եզրափակելով, հաշվի առնելով, որ սույն գործով անհրաժեշտ էին համայնքային դատարանում դատական նիստի հասանելիության սահմանափակումները, և մեծամասնությամբ ընտրությունները թույլ են տվել բոլոր շահագրգիռ լրագրողներին ընտրությանը մաանակցվելու հավասար հասանելիություն, և այս առնչությամբ Պայմանավորվող Պետությունների կողմից

Ներկայացված գնահատման չափանիշների, դիմումատուի կազմակերպությունը չի ենթարկվել չարդարացված տարբերվող վերաբերմունքի:

**Եզրակացություն.**  
(ակնհայտորեն անհիմն):

անընդունելի

## ՀՈԴՎԱԾ 34

**Հայց ներկայացնելու իրավունքի  
իրականացման խոչընդոտում  
ժամանակավոր միջոցառումներ  
չիրականացնելու վերաբերյալ Դատարանի  
կողմից նշում խոշտանգման իրական վտանգի  
մասով՝ խախտում**

*Mannai v. Italy*  
**Մաննաին ընդեմ Իտալիայի  
Թիվ 9961-10**  
**Վճիռ 27.3.2012 [2-րդ բաժանմունք]**

### Փաստեր

Դիմումատուն Թունիսի քաղաքացի է և բնակվում է Թունիսում: 2005թ. մայիսին Խորհրդական պետական մարմինները դիմումատուին ձերբակալելու հրաման են արձակում քրեական դավադրության մեջ ներառվելու կասկածով, որը կապված էր Խորհրդական մայիսի 2005թ. մայիսին Ավստրիայում դիմումատուին ձերբակալել են և 2005թ. հունիսին արտահաննել Խորհրդականին: 2006թ. հոկտեմբերին դիմումատուին մեղավոր են ճանաչել և նշանակել պատիժ՝ ավելի քան հինգ տարով ազատազրկում: Դատավճռում նշվել է, որ դիմումատուն իր ազատազրկումը կրելուց հետո պետք է արտաքսվի Խորհրդականին:

2010թ. փետրվարին դիմումատուի պահանջով Դատարանը, հիմնվելով Դատարանի Կանոնակարգի 39-րդ կանոնի վրա, ասել է Խորհրդականի Կառավարությանը, որ դիմումատուի համար առավել նպաստավոր կիներ չարտաքսել վերջինիս թունիս մինչև դրա վերաբերյալ ծանուցում կստացվեր: Դատարանը նաև ուշադրությունը հղել է այն փաստի վրա, որ այս քայլը չկատարելը կարող է առաջացնել Կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում: Ներում ստանալուց հետո դիմումատուի ազատազրկման ժամկետը՝ 2010թ. փետրվարի 20-ին ավարտվում է: Նույն օրը ոստիկանապետը դիմումատուի արտաքսման վերաբերյալ հրաման է արձակում: 2010թ. մայիսի 1-ին դիմումատուին արտաքսում են թունիս: Դատարանից 2010թ. մայիսի 3-ին ստացված նամակին Խորհրդականի Կառավարությունը պատասխանում է, որ դիմումատուին արտաքսել են, որովհետև նա ազգային անվտանգությանը վտանգ է ներկայացրել:

Դիմումատուն նաև հայտարարել է, որ թունիս ժամանելուն պես նրան ձերբակալել են, իսկ կալանքի տակ գտնվելու ժամանակ ոստիկանության կողմից նա ենթարկվել է խոշտանգումների, չնայած այդ փաստը վիճարկվել է Խորհրդականի կառավարության կողմից: Վճռի կայացման օրը գործը դեռ գտնվում էր Վճռաբեկ Դատարանի վարույթում:

### ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 3. Դիմումատուն արտաքսվել էր թունիս, որտեղ նա գործի քննության ժամանակ կանգնել էր անմարդկային վերաբերմունքի վտանգի առջև: Իր արտաքսման հրամանի իրականացումը, այդ

իսկ պատճառով, խախտել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները:

**Եզրակացություն՝ խախտում (միաձայն):**

Հոդված 34. Դիմումատուին արտաքսել էին մի երկիր, որը Կոնվենցիային կողմ չի հանդիսացել, որտեղ նա բողոքել է, որ, նա կարող էր ենթարկվել Կոնվենցիոն դրույթներին հակասող վերաբերմունքի: Այդ իսկ պատճառով նրա արտաքսումը ամենաքիչը անհմաստ է դարձրել Կոնվենցիայի դրույթների որևէ խախտումը և անդառնալիորեն թուլացրել է 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքների պաշտպանության մակարդակը: Այնուհետև, այն փաստը, որ դիմումատուն ի վիճակի էր շարունակել վարույթը, քանի որ նա այդ ընթացքում օգտվում էր իր ազատ տեղաշարժվելու իրավունքից, և իրեն թույլ էր տրվել կապ պահպանել իր փաստաբանի հետ, չի կանխարգելել 34-րդ հոդվածի ներքո խնդրի բարձրացումը:

Այդ հոդվածում սահմանված իրավունքների իրականացումը խոչընդոտվել էր այնպես, որ դիմումատուի համար Պատասխանող կառավարության գործողությունների արդյունքում ավելի մեծ դժվարություններ էր առաջացրել իր այդ իրավունքի իրականացման համար: Ի հավելում, դիմումատուին արտաքսելուց առաջ Պատասխանող կառավարությունը չէր պահանջել 39-րդ կանոնի ժամանակավոր միջոցառման դադարեցումը, որի դեռ ուժի մեջ լինելու մասին նրանք տեղյակ էին: Այն փաստը, որ դիմումատուի իրավունքները չէին ապահովվել իտալական օրենսդրությամբ, լուրջ խոչընդոտ է առաջացնում, որպեսզի կառավարությունը իրականացնի դիմումատուի իրավունքների պասշտպանության իր

պարտավորությունները և նորոգի Դատարանի կողմից ճանաչված խախտումների հետևանքները: Այս իրավիճակը խոչընդոտ էր հանդիսացել դիմումատուի անհատական դիմում ներկայացնելու իրավունքը իրականացնելու համար: Հետևաբար, չպահպանելով ժամանակավոր այդ ակտի պահանջը իտալիան խախտել է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով սահմանված իր պարտավորությունները:

**Եզրակացություն՝ խախտում (միաձայն):**

41-րդ հոդված. 15,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում

## ՀՈԴՎԱԾ 35 Հոդված 35 § 3 (բ)

**Ոչ էական թերացումներ**

**Քրեական վարույթի գործով ազատազրկման պատժաչափի նվազեցում՝ անընդունելի**

*Gagliano Giorgi v. Italy*  
**Գագլիանո Գիորգին ընդդեմ Իտալիայի**  
**թիվ 23563/07**  
**Վճիռ 6.3.2012 [2-րդ բաժանմունք]**

### Փաստեր

1988թ. քրեական գործ է հարուցվել դիմումատուի նկատմամբ: Այն տևեց մինչև 1999թ: Դիմումատուն դատապարտվել էր կեղծիք կատարելու համար և նրա նկատմամբ նշանակվել էր պայմանական մեկ տարի ազատազրկում: Նա մեկ տարով զրկվել էր նաև հասարակական ծառայություններից: Կաշառքի մեղադրանքի ժամկետը հայտարարվել էր վաղեմության ժամկետն անց: 2001թ. դիմումատուի

նախաձեռնությամբ «Pinto» ընթացակարգ սկսվեց 2006թ.-ին ավարտված քրեական դատավարության տևողության վերաբերյալ: Նրան որևէ փոխհատուցում չտրամադրվեց:

## ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 35 § 3 (բ). Քրեական դատավարության տևողության արդյունքում 1998թ. վերաբննիչ դատարանը կաշոքի մեղադրանքը ճանաչեց վաղեմության ժամկետն անցած: Եթե նույնիսկ Դատարանի տրամադրության տակ եղած նյութերը մատնացուց չեն անում նվազեցման հատակ չափը և ոչ էլ, ի վերջո, պարզաբանում են արդյո՞ք որևէ կապ առկա է նվազեցման և «ողջամիտ ժամկետ» պահանջող խախտման միջև՝ այն ակնհայտորեն նվազեցրել էր դիմումատուի պատժաչափը, հատկապես, որ վաղեմության ժամկետն անցած մեղադրանքը երկու մեղադրանքներից ծանրն էր: Դիմումատուն որոշեց չհրաժարվել վաղեմության ժամկետի կիրառումից՝ իտալական օրենսդրությամբ իրեն հասանելի հնարավորությունից: Այս հանգամանքներում, պատժի նվազեցումը ամեն դեպքում փոխհատուցում էր կամ էականորեն նվազեցրել է քրեական դատավարության չափազանց երկար ժամկետին հետևող սովորական վնասը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմումատուն չի կրել ողջամիտ ժամկետու լուրմներ անցկացնելու իր իրավունքների «էական թերացումներ»: Գանգատը շոշափում էր քրեական գործերով «ողջամիտ ժամկետում» դատաքննության իրավունքի հարցը, որի շուրջ Դատարանը ունի մեծ քանակությամբ նախադեպեր: Բողոքի ուսումնասիրությանն հետամուտ լինելը, հետևաբար, արդարացված չէ Եվրոպական *ordre public* հանձնարարականներից որևէ

մեկով, որի մասն են կազմում Կոնվենցիան և Արձանագրությունները: Քրեական դատավարության տևողության հարցը ուսումնասիրվել է երկու իրավասու դատարանների կողմից (Վերաբննիչ դատարան և Վճռաբեկ դատարան) «Pinto» օրենսդրության նպատակներից ելնելով. դիմումատուն իր բողոքի հիմքերը ներկայացրել է դատարաններից վերջինիս՝ իրեն փոխհատուցում չտրամադրելու մասին նախկին դատարանի կայացրած որոշման դեմ: Նման հանգամանքներում, գործը պատշաճ կերպով ուսումնասիրվել է ներպետական ատյանների կողմից, և գանգատի վրա էական ազդեցություն ունեցող կամ Կոնվենցիայի մեկնաբանման կամ ներպետական օրենսդրությանը վերաբերող որևէ կարևոր հարց չի մնացել անպատճախան: Անընդունելիության պայմանները առկա են, հետևաբար այս բողոքը հայտարարվում է անընդունելի:

**Եզրակացություն-** անընդունելի (ոչ էական թերացումներ)

Դատարանը նաև միաձայն գտավ «Pinto» 6 § 1 խախտում դատավարության ոչ ողջամիտ ժամկետի մասով:

**Դիմումատուի կողմից ցածրարժեք պահանջի կապակցությամբ երկարատև անգործություն՝ անընդունելի**

***Shefer v. Russia***  
**Շեֆերն ընդդեմ Ռուսաստանի**  
**թիվ 45175/04**  
**Որոշում 13.32012 [1-ին բաժանմունք]**

## Փաստեր

2004թ. մասնավոր կազմակերպության վնասների դիմաց դիմումատուին հատուցվել է մոտավորապես 34 ԵՎՐ (որի չափը ավելի ուշ հասավ մոտավորապես 61 ԵՎՐոյի): Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը դիմումատուին վերադարձրեց հարկադրաբար չկատարված հարկադիր կատարման կատարողական թերթիկ, քանի որ այն չէր բովանդակում պարտապանի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Դիմումատուի բողոքի հիման վրա երկրորդ ատյանի դատարանը գտավ, որ հարկադիր կատարման կատարողական թերթիկը իսկապես թերի է, և դատական ակտերի հարկադիր կատարողները իրավունք ունեին վերադարձնել այն ուղղման նպատակով: Դիմումատուն երբեք այլս կատարողական թերթը չներկայացրեց դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, ինչը պահանջվում էր ներպետական օրենսդրությամբ:

## ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 35 § 3 (բ). Հաշվի առնելով շնորհված գումարի փոքր չափը, հիմքեր չկան ենթադրելու, որ վճռի ուժի մեջ մտնելը օբյեկտիվորեն կարևորություն ուներ դիմումատուի համար: Ինչ վերաբերում է սուբյեկտիվ կարևորությանը, Դատարանը վճռորոշ կարևորություն տվեց փաստին, որ դիմումատուն երբեք կատարողական թերթը նորից չի ներկայացրել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, թեև իրեն շնորհված գումարի ուժի մեջ մտնելու միակ օրինական ճանապարհն էր: Ավելի քան յոթ տարի արդյունավետ անգործությունից հետո, դիմումատուն ցույց տվեց, որ նա էապես շահագրգուված չէ

գործընթացի ելքով: Մարդու իրավունքների պաշտպանությունը չի պահանջում գործի հանգամանքների ուսումնասիրություն, քանի որ վճիռների ուժի մեջ մտնելու հարական օգնության հարցը արդեն ուսումնասիրվել է Ռուսաստանի դեմ մյուս գործերի շրջանակներում: ի վերջո, Դատարանը բավարարված է, որ դիմումատուի բողոքը ուսումնասիրվել է ներպետական իրավասության երկու մակարդակներում և նրա գործի հանգամանքները ընդհանուր առմամբ վերցրած չի բացահայտում արդարության մերժում:

**Եղուկացություն – անընդունելի (միաձայն)**

## 37-ՐԴ ՀՈԴՎԱԾ

### 37 § 1

#### Գանգատների ցուցակից հանումը

Բարեկամական կարգավորում կազմելու վերաբերյալ Կառավարության միակողմանի հայտարարության պայմանների հետ դիմումատուի համաձայնությունը՝ մասնակի ցուցակից հանված

**Սեսնիկսն ընդդեմ Լավվիայի  
Cēsnieks v. Latvia – 9278/06**

Որոշում 6.3.2012 [3-րդ բաժանմունք]

## Փաստեր

Սպանության համար ծերբակալված դիմումատուն Եվրոպական դատարանին հասցեագրված իր գանգատում բողոքել էր ոստիկանատանը կալանքի տակ պահելու ընթացքում վատ վերաբերմունքի ենթարկվելու և ոստիկանության դեմ իր մեղադրանքների արդյունավետ քննություն չիրականացնելու համար: Նա հիմնվել էր Կոնվենցիայի 3-րդ և 13-րդ հոդվածների

վրա: Նա նաև վիճարկեց 6-րդ հոդվածը, որ ինքը զրկված է եղել սպանության կապակցությամբ արդար դարաքննությունից:

## ԻՐԱՎՈՒՆՔ

37 § 1. Կառավարությունը տեղեկացրեց Դատարանին, որ 3-րդ և 13-րդ հոդվածների ներքո դիմումատուի գանգատների հետ կապված իրենք պատրաստվում են միակողմանի հայտարարություն անել: Իրենք ընդունել են այդ դրույթների խախտումը և առաջարկում են դիմումատուին որպես փոխհատուցում վճարել 10,000 եվրո: Դիմումատուն տեղեկացրեց Դատարանին, որ նա համաձայն է կառավարության հայտարարության պայմաններին: Ստանալով դիմումատուի դրական համաձայնությունը՝ Դատարանը կարծեց, որ կողմերի միջև առկա էր բարեկամական կարգավորում գանգատի այս մասի վերաբերյալ:

6-րդ հոդվածի ներքո գանգատի ուսումնասիրությունը հետաձգվեց:

**Եզրակացություն՝ մասնակի ցուցակից հանված (միաձայն):**

(Տե՛ս Moroz v. Ukraine (որոշում), թիվ 42009/07, 2012թ.-ի մարտի 6)

## Հոդված 37 § 1 (գ)

**Զարդարացված շարունակվող քննություն իրական և անխուսափելի հանձնման վտանգի բացակայություն՝ ցուցակից հանվել է**

## Աթմական ընդդեմ Գերմանիայի թիվ 45293/06

Որոշում 6.3.2012 [5-րդ բաժանմունք]

## Փաստեր

Դիմումատուն, ով ուներ թուրքական և հայկական արմատներ, կալանավորվել էր և ենթադրաբար խոշտանգվել էր 1980թթ.-ին թուրքական ռազմական բանտում որպես Քուրդիստանի բանվորական կուսակցության (ՔԲԿ) ազգեցիկ անդամ իր գործունեության համար: 2005թ-ին նա մուտք գործեց Գերմանիա և ապաստան պահանջեց, բայց ձերբակալվեց և կալանավորվեց համաձայն հանձնման վերաբերյալ թուրքական պահանջի: Նա հետագայում գանգատ ներկայացրեց Եվրոպական դատարան, որն 2007թ-ի հոկտեմբերին Դատարանի կանոնների 39-րդ կանոնի ներքո նշեց, որ դիմումատուն չպետք է հանձնվի մինչ հետագա ծանուցումը: Գերմանիայի արդարադատության նախարարությունը դեռ չի ընդունել որոշում դիմումատուի հանձնման թույլտվություն տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ: Դիմումատուն ազատվեց կալանքից մինչ 2008թ-ի ապրիլին հանձնման իրականացումը: 2012թ-ի փետրվարին Դատարանի պահանջով Գերմանիայի կառավարությունը երաշխավորեց, որ եթե Դատարանը դադարեցնի գոյություն ունեցող միջանկյալ միջոցը, ապա իրենք թույլ կտան դիմումատուին կրկին դիմել Դատարան հետագա այնպիսի պայմաններով, ինչպիսի կիյնեին հանձնման իրականացման արդյունքում:

## ԻՐԱՎՈՒՆՔ

*Atmaca v. Germany*

37 § 1 (գ). Դատարանը պետք է պարզի, թե արդյոք 2007թ.-ից ի վեր գործում փաստացի զարգացումների լրացի ներքո նպատակահարմար է գործը Դատարանի ցուցակից հանելը: Այդ կապակցությամբ, Դատարանը նշեց, որ մինչդեռ Դատարանն ունի հիմքերը պարզելու լայն հայեցողություն, որի հինման վրա 37-րդ հոդվածի 1-ին մասի (գ) կետի ներքո գանգատը կարող է ցուցակից հանվել, սույն գանգատը տարբերվում է նախորդ գործերից, որոնցում այդ դրույթը կիրառվում էր այն մասով, որ բացակայում էր թե անբավարար ջանասիրությունը, թե ներպետական իշխանությունների կոմիտ որևէ փոխհատուցման միջոցը: Սակայն, քանի որ դիմումատուն չէր կարող հանձնվել առանց արդարադատության նախարարության թույլտվության և ազատվել էր կալանքից մինչ հանձնումը և որոշում էր ստացել, որ ինքը իրական հնարավորություն կունենար միջանկյալ միջոցառումների համար կրկին Դատարան ապագայում դիմելու, եթե իր հանձնումը իրականացվեր, ապա չէր ենթադրվի, որ իրեն սպառնում է հանձնման իրական և անխուսափելի վտանգը: Դեռ ավելին, եթե նախարարությունը ի վերջո մերժի իրականացնել դիմումատուի հանձնումը, ապա համաձայն օժանդակության սկզբունքի հարցը կլուցվի ներպետական մակարդակով առանց Դատարանի միջամտության: Նման հանգամանքներում շարունակվող ըննությունը այլևս արդարացված չէր:

**Եզրակացություն՝** գործերի ցուցակից հանում (միաձայն):

## 46-ՐԴ ՀՈԴՎԱԾ

### Պիլոտային վճիռ – Ընդհանուր միջոցներ

Պատասխանող Պետությունը պահանջում էր ներկայացնել չափազանց երկարատև դատավարության համար համարժեք փոխհատուցման արդյունավետ միջոց

*Ümmühan Kaplan v. Turkey  
Ումմուհան Քափլան ընդդեմ Թուրքիայի  
թիվ 24240/07  
Վճիռ 20.3.2012 [2-րդ բաժանմունք]*

### Փաստեր

1970թ-ին դիմումատուի հայրը անշարժ գույքի գործերով դատարանում իր անունով հոդատարածք գրանցելուն ուղղված գործնթաց սկսեց: Նրա մահից հետո՝ 1995թ-ին դիմումատուն ձեռնարկեց անհրաժեշտ քայլեր քաղաքացիական գործով որպես կողմ ընգրկվելու համար: Գործը դեռ գտնվում էր վարույթում, երբ Դատարանն ուսումնասիրեց գանգատը:

### ԻՐԱՎՈՒՆՔ

46-րդ հոդված: Դատարանը գտավ Կոնվենցիայի 6 § 1-ի և 13-րդ հոդվածների խախտում վիճարկվող չափազանց երկարատև դատավարության և արդյունավետ միջոցի բացակայության պատճառով, որը հնարավորություն կտար բողոքարկել այդ երկարատևությունը: Դիմումատուի իրավունքների խախտումն առաջացել էր Թուրքիայում գոյություն ունեցող կառուցվածքային խնդրից: 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ նոյն խնդրի պատճառով 2700-ից ավել գանգատներ կային Դատարանի վարույթում (որոնցից

2373-ը չէին փոխանցվել Թուրքիայի կառավարությանը և 330-ը փոխանցվել էին): Դրա ներքո հաշվի առնելով դիմումատուների թվի աճը և խախտում ճանաչող հնարավոր վճիռները Դատարանը որոշեց կիրառել պիլոտային վճոհ գործընթաց: Դատարանը նաև կառավարության ուշադրությունը իրավիրեց այն փաստի վրա, որ իրենք արդեն ծեռնարկել էին Կիպրոսի հյուսիսային մասում գտնվող հույն կիպրիոտներին պատկանող անշարժ գույքի տեղաշարժման հետ կապված կառուցվածքային և սիստեմատիկ խնդրի լուծմանն ուղղված միջոցներ: Նա հետագայում հետաքրքրությամբ նշեց, որ օրենսդրական փոփոխություններն արդեն իսկ ընդունվել են, մասնավորապես, Սահմանադրական դատարանին հասցեագրված անհատական բողոքը, որը պետք է ուժի մեջ մտներ 2012թ-ի սեպտեմբերի 23-ին, ինչպես նաև այս կառուցվածքային խնդիրն ուղղելու վերաբերյալ արդարադատության նախարարության կողմից տրված խոստումը: Դատարանը որոշեց, որ իր վարույթում գտնվող և 2012թ-ի սեպտեմբերի դրությամբ ներկայացված գանգատների կապակցությամբ, սույն գործով վճիռ վերջնական դառնալու պահից ոչ ուշ քան մեկ տարուց Թուրքիան պարտավոր է սահմանել համարժեք և բավարար փոխահատուցում նախատեսող արդյունավետ միջոց այն գործերով, որոնցում դատական գործընթացը գերազանցել է ողջամիտ ժամկետը: Դրանից հետո Դատարանը որոշեց հետաձգել Թուրքիայի կառավարությանը դեռ չփոխանցված նմանատիպ գանգատների և 2012թ-ի սեպտեմբերի 23-ի դրությամբ ներկայացված գանգատների քննությունը: Արդեն իսկ փոխանցված գանգատների քննությունը

Դատարանի կոմից կշարունակվի սովորական կարգով:

41-րդ հոդված: 15600 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխահատուցում, իսկ նյութական վնասի վերաբերյալ հայցը մերժել:

## Թիվ 1-ին Արձանագրության 3-րդ հոդված

**Ընտրելու իրավունք**

**Անձանց կողմից կարծիք հայտնելու ազատություն**

Հունաստանի քաղաքացի օտար երկրում բնակվող անձանց խորհրդարանական ընտրություններին մասնակցելու գործընթացը կարգավորող օրենսդրության բացակայություն՝ խախում չկա

*Sitaropoulos and Giakoumopoulos v.  
Greece*

**Սիթարոպուսը և Գյակումոպուսն  
ընդդեմ Հունաստանի**

**թիվ 42202/07**

**Վճիռ 15.3.2012 [ՄՊ]**

## Փաստեր

Դիմումատուները Հունաստանի երկու քաղաքացիներ են, ովքեր մշտապես բնակվում են Ստրասբուրգում (Ֆրանսիա): Ֆրանսիայում Հունաստանի դեսպանին 2007թ. սեպտեմբերի 10-ի ուղղված նամակով դիմումատուները ցանկություն են հայտնել 2007թ. սեպտեմբերի 16-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցել այն երկրից, որտեղ նրանք բնակվում են: Երկու օր հետո

դեսպանը նրանց պատասխանում է, որ իրենց խնդրանքը չի կարող կատարվել, քանի որ հոյն քվեարկողների, որոնք գտնվում էին Երկրից դուրս, ընտրելու իրավունքը կարգավորող որևէ կանոն չկար: Ընդհանուր ընտրությունները տեղի ունեցան, իսկ դիմումատունները, ովքեր չեն գնացել Հունաստան, չիրականացրեցին իրենց ընտրելու իրավունքը:

2010թ. հուլիսի 8-ի վճռում (տե՛ս տեղեկատվական նոթեր թիվ 132) Դատարանի պալատը գտել է, որ Կոնվենցիային կից թիվ 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

## ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1-ին Արձանագրության 3-րդ հոդված: Դիմումատունները բողոք են ներկայացրել այն փաստի կապակցությամբ, որ Հունաստանի օրենսդրությունը հնարավորություն չի ընձեռել, որպեսզի Հունաստանից դուրս բնակվող իր քաղաքացիները մասնակցեն խորհրդարանական ընտրություններին այնտեղ, որտեղ նրանք բնակվել են: Չնայած որ Վերջին երեսունինգ տարվա ընթացքում Սահմանադրության մեջ դրույթներ են ներառել էքսպատրիատների ընտրելու իրավունքի վերաբերյալ, սակայն որևէ միջոց չի ձեռնարկվել, որպեսզի սա գործադրվի: Այդ իսկ պատճառով Դատարանը պետք է քններ այն հարցը, թե արդյոք բացի այն հանգամանքից, որ ընտրելու իրավունքի իրականացումը չի իրականացվել, արդյոք ընտրական համակարգը այնուամենայնիվ թույլ էր տալիս «անձանց կողմից կածիք հայտնելու ազատություն» և պահպանել է «քվերակելու բուն էությունը» և ավելի լայն իմաստով արդյոք թիվ 1-ին

Արձանագրության 3-րդ հոդվածը Պետություններին պարտավորեցնում է էքսպատրիատների համար օտար երկրում ապահովել ընտրելու իրավունքը իրականացնելու հնարավորություն: Առաջին, ո՞չ վերջին միջազգային և տարածքային պայմանագրերը, ո՞չ միջազգային իրավասու մարմինների կողմից դրանց մեկնաբանությունները այն անձանց, ովքեր ժամանակավորապես կամ մշտապես բացակայել են այն երկրից, որի քաղաքացին են հանդիսացել, չեն սահմանել որևէ պարտավորություն, որպեսզի այդ պետությունը այլ երկրում քվեարկելու համար միջոցներ ձեռնարկի: Ճիշտ է, որ Եվրոպայի խորհրդի ինստիտուտները տարբեր առիթներով կոչ են արել անդամ պետություններին, որպեսզի նրանք իրենց քաղաքացիների համար, որոնք բնակվում են այլ երկրում, ընտրական գործընթացին ամբողջապես մասնակցելու հնարավորություն ստեղծեն: Ինչևէ, ինչպես որ նշել է Վենետիկի Հանձնաժողովը<sup>1</sup> էքսպատրիատների ընտրելու իրավունքը պարզեցնելու գործընթացը, որքան էլ որ ցանկալի է, պետությունների համար պարտադիր բնույթ չի կրում, բայց ավելի լավ կլինի, որ այն կարգավորում ստանայի արաքանչյուր երկրի օրենսդրությունում: Երկրորդ՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրության համեմատական հետազոտումը ցույց է տվել, որ օրենքի առկայության անհրաժեշտությունը բավական չէ, որ պետությունները պարտավորվեն ապահովել օտար երկրում գտնվող իրենց

<sup>1</sup> Եվրոպական հանձնաժողովը հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով, լավագույնս հայտնի որպես Վենետիկի հանձնաժողով, սահմանադրական հարցերով Եվրոպայի Խորհրդի խորհրդատվական մարմին է, որը ստեղծվել է 1990թ.

քաղաքացիների ընտրական իրավունքը: Մինչեռ անդամ պետությունների զգալի մեծամասնությունը իրենց քաղաքացիների համար ընտրելու հնարավորություն էր ընձեռում, իսկ որոշ պետություններ նման հնարավորություն չեն ընձեռում: Ինչ վերաբերում է այդ իրավունքները կարգավորող պայմաններին՝ դրանք ներկայումս շատ են տարբերվում, ինչը վկայում է այն մասին, որ անդամ պետությունները մեկնաբանության լայն հնարավորություն ունեն:

Երրորդ՝ չնայած, որ հունական Սահմանադրությունը իր արտագաղթած քաղաքացիներին իրենց բնակության վայրում ընտրելու իրավունքը իրականացնելու հնարավորության վերաբերյալ դրույթներ էր պարունակում, դա օրենսդրությանը չէր պարտադրում այդպես վարվել, քանի որ այդ պարունակվող դրույթները պարտադիր բնույթ չունեին: Այսպիսիով, Դատարանի իրավասության մեջ չէր մտնում նշել, թե ներառետական մարմինները երբ և ինչպես իրագործեն այդ դրույթները: Ավելին՝ անհերքելի էր այն փաստը, որ Հունաստանի պետական մարմինները պարբերաբար փորձեր են արել գործադրել այն օրենսդրությունը, որը կարգավորում է քննարկվող հարցը: Այնուամենայնիվ, այդ փորձերը քաղաքական համաձայնության չեն հասել: Վերջապես՝ չնայած այն հանգամանքին, որ դիմումատունները այնքան են մտահոգվել հետևյալ հարցերով, որքան որ քաղաքացիները, տեղին չէր այստեղ վկայակոչել Հունաստանի իրավական վիճակը: Ամեն դեպքում իրավասու մարմինները չեին կարող հաշվի առնել ընտրելու իրավունքի կարգավորման համար յուրաքանչյուր անհատական դեպք, այլ հակառակ՝ պետք է սահմանեին ընդհանուր

կանոն: Իսկ ինչ վերաբերում է դիմումատունների ֆինանսական, ընտանեկան և մասնագիտական կյանքի խափանմանը այն դեպքում, եթե նրանք գնային Հունաստան ընտրելու համար, ապա դա քննարկվող իրավունքի խախտման համար անհամաշափ չի կարելի համարել: Եղակացություն. խախտում չկա (միաձայն)

## Դատարանի նորություններ

### Դատարանի ապագայի վերաբերյալ Բրայթոնի համաժողով

Միացյալ Թագավորության կողմից Բրայթոնում 2012թ. ապրիլի 18-20-ը Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Բրիտանական նախագահության ժամանակ կազմակերպվում է Դատարանի ապագայի վերաբերյալ բարձր մակարդակով համաժողով: Լիազումար Դատարանը նախնական կարծիք է ընդունել համաժողովի կազմակերպման համար:

### Դատարանը և ԼՀԵՏ-իրավունքների հարցեր

Սր Նիկոլաս Բրաթսան՝ Դատարանի նախագահը, մասնակցեց մի համաժողովի, որը կոչվում էր «Սեքսուալ կողմնորոշման կամ գենոերային նույնության հիմքով խտրականության դեմ պայքար Եվրոպայի տարածքում. գիտելիքների փոխանակում և քայլ դեպի առաջ», որը տեղի է ունեցել Ստրասբուրգում 2012թ. մարտի 27-ին: Այս համաժողովը կազմակերպվել է Նախարարների կոմիտեի Բրիտանական նախագահության կողմից

Հղում Նախագահ Բրաթսայի խոսքին

Գենդերային նույնության խնդիրների և սեքսուալ կողմնորոշման խնդիրների վերաբերյալ հղում տվյալների ցանկին, որը նախագծվել է Քարտուղարության մամուլի բաժնի կողմից:

### **Դատարանի վերջին հրատարակություններ**

#### **3. Ոչ պաշտոնական լեզուներով թարգմանություններ**

##### **. Խորականության արգելման վերաբերյալ ձեռնարկ**

Խորվաթերեն, դանիերեն, հոլանդերեն, էստոներեն, ֆիններեն, հունարեն, լատվերեն, լիտվերեն, պորտուգալերեն, սլովակերեն, սլովեներեն, շվեդերեն ձեռնարկի նոր թարգմանություններ, որը համատեղ տպագրվել է Դատարանի և Եվրոպայի Միություն Հիմնարար իրավունքների գործակալության (ՀԻԳ) կողմից 2011թ. Հետևյալ ձեռնարկները կարելի ենք բերել Դատարանի վերկայքից, որտեղ ձեռնարկի օտար լեզվով քանակը հասել է ավելի քան քսանի ([www.echr.coe.int/](http://www.echr.coe.int/) Case-law):

Priručnik o europskom antidiskriminacijskom pravu (hrv)

Håndbog om europæisk lovgivning om ikkeforskelsbehandling (dan)

Handboek over het Europese nondiscriminatierecht (nld)

Euroopa võrdse kohtlemise õiguse käsiraamat (est)

Euroopan syrjinnänväistaisen oikeuden käsikirja (fin)

Եցειρίδιο σχετικά με την ευρωπαϊκή

νομοθեσία κατά των διακρίσεων (ell)  
Eiropas diskriminācijas novēršanas tiesību rokasgrāmata (lav)

Europos nediskriminavimo teisės vadovas (lit)  
Manual sobre a legislação Europeia  
Andiscrimination (por)

Príručka o európskom antidiskriminačnom práve (slk)

Priročnik o evropski zakonodaji o nediskriminaciji (slv)

En handbok i europeisk diskrimineringsrätt (swe)

### **. Գործնական ուղեցույց վարույթ ընդունելու չափանիշների մասին**

Այս ուղեցույցի թարգմացված տարբերակը, որը տպագրվել է 2011թ. վերջին, այժմ թարգմանվել է ուկրաիներեն, սերբերեն (վերջին թարգմանությունը կազմակերպվել է Սերբիայում մարդու իրավունքների ոլորտում Եվրոպայի Խորհրդի երկողմանի համագործակցության գործողությունների շրջանակներում): Այս թարգմանությունները ուսւերեն և թուրքերեն թարգմանությունների հետ միասին կարելի ենք բերել Դատարանի վերկայքում ([www.echr.coe.int/](http://www.echr.coe.int/) Case-law):

Այս ձեռնարկի բնօրինակների թարգմանությունները աղբեջաներեն և ռուսիներեն տարբերակներով տրամադրվել են Աղբեջանի արդարադատության նախարարության և համապատասխանաբար Ռումինիայի արտաքին գործերի նախարարության կողմից: Աղդեն կարելի է ձեռք բերել բուլղարերեն, գերմաներեն, հունարեն, իտալերեն և իսպաներեն թարգմանությունները:

Şikayetlerin qəbul edilməsi kriteriyalarına dair Praktiki Bələdçi (aze) (2009)

Ghid Practic cu privire la Admisibilitate

(ron) (2009)

Praktični Vodič kroz Uslove Prihvatljivosti

(srp) (2011)

Практичний посібник

щодо прийнятності заяв (ukr) (2011)

**4. Մարդու իրավունքների եվրոպական  
դատարանի 2011թ. տարեկան  
գեկույցը**

Դատարանը արդեն հրապարակել է 2011թ.

տարեկան գեկույցի տպագրված

տարբերակը: Զեկույցը պարունակում է

վիճակագրական և էական

տեղեկատվության մեջ պաշար, ինչպիսիք

են՝ 2011թ. Դատարանի կողմից կայացված

հիմնական վճիռների և որոշումների

Իրավախորհրդատուի հակիրճ

հետազոտությունը, ինչպես նաև

ամենակարևոր վճիռների, որոշումների և

ավարտված գործերի ցանկից ընտրված

ընտրանի: Էլեկտրոնային տարբերակը

կարելի է ծեռք բերել Դատարանի

ինտերնետային կայքից ([www.echr.coe.int](http://www.echr.coe.int) -

Reports):



